

«ԱՐԵՉԱԿ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԳՄԱԿԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ
և անկախ աուդիտորական եզրակացություն
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2019 թ. ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏԿԱԾ ՏԱՐԿԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՍԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՍԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ..... 5

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 7

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 8

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1.Ներածություն 9

2.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն 9

3.Կարևոր հաշվապահական գնահատումներ և հաշվապահական հաշվառման քաղաքականությունների կիրառման դատողություններ 27

4.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 29

5.Ժամկետային ավանդներ 29

6.Հաճախորդներին տրվող վարկեր 30

7.Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով 36

8.Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 37

9.Ակտիվի օգտագործման իրավունք 37

10.Այլ ակտիվներ 38

11.Վարկեր և փոխառություններ 39

12.Վարձակալության գծով պարտավորություններ 40

13.Այլ պարտավորություններ 40

14.Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունների համադրում..... 41

15.Բաժնետիրական կապիտալ..... 41

16.Տոկոսային եկամուտ և ծախս 42

17.Այլ գործառնական եկամուտ 42

18.Անձնակազմի գծով ծախսեր..... 42

19.Վարչական և այլ գործառնական ծախսեր 42

20.Շահութահարկի գծով ծախս 43

21.Ֆինանսական ռիսկերի կառավարում..... 44

22.Կապիտալի կառավարում 58

23.Պայմանական դեպքեր և պարտավորություններ 58

24.Ֆինանսական գործիքների իրական արժեքը 60

25.Փոխկապակցված անձանց հետ գործարքներ..... 61

26.Հետագա իրադարձություններ 63

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

ԴԵԿԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2019 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դեկավարությունը պատասխանատու է «ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և Ընկերության բաժնետիրական կապիտալի փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՅՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՅՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Ընկերության ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին, և
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Դեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերությունում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն դեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՅՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են Տնօրենների խորհրդի կողմից 2020 թ. մայիսի 20-ին:

Ստորագրված է Տնօրենների խորհրդի անունից՝



Արշակ Եսայան
Գործադիր տնօրեն



Արմինե Աղաջանյան
Ֆինանսական տնօրեն

Մայիսի 21, 2020 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն



ԱՆՎԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի բաժնետերերին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2019 թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք)* և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՄ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Դեկլարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Դեկլարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը դեկլարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկլարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դեկլարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե ԸՆկերության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել ԸՆկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ԸՆկերությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Սրբուհի Զակոբյան
Գործադիր տնօրեն



Արփինե Ղևոնդյան
Աուդիտի գործընկեր

A handwritten signature in blue ink, which appears to read "Arpine Khachatryan".

Մայիսի 21, 2020 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՏԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
(հազար ՀՀ դրամով)**

	Ծան.	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	481,425	335,418
Ժամկետային ավանդներ	5	3,199,145	3,230,269
Հաճախորդներին տրված վարկեր	6	19,494,014	17,504,020
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	7	610,371	1,397,593
Ակտիվների օգտագործման իրավունք	9	400,725	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8	569,269	454,446
Այլ ակտիվներ	10	207,819	227,152
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		24,962,768	23,148,898
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	11	2,104,921	2,151,066
Պարտավորություն ընթացիկ շահութահարկի գծով		5,333	77,756
Հետաձգված շահութահարկի պարտավորություն	20	106,782	117,643
Պարտավորություններ շահաբաժնի գծով	15	386,450	339,347
Վարձակալության պարտավորություններ	12	420,411	-
Այլ պարտավորություններ	13	175,925	220,059
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		3,199,822	2,905,871
ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	15	3,445,000	3,445,000
Չբաշխված շահույթ		18,317,946	16,798,027
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ		21,762,946	20,243,027
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ		24,962,768	23,148,898

Ստորագրված է Տնօրենների խորհրդի անունից՝ 2020 թ. մայիսի 21-ին:


Մարիամ Եսայան
 Գործադիր տնօրեն


Արմինե Աղաջանյան
 Ֆինանսական տնօրեն



9-63 էջերում ներկայացված օպերատիվությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**ՀԱՅՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով)**

	Ծան.	2019 թ.	2018 թ.
Տոկոսային եկամուտ	16	5,283,227	5,296,687
Տոկոսային ծախս	16	(306,279)	(301,173)
Չուտ տոկոսային եկամուտ		4,976,948	4,995,514
Արժեզրկման պահուստի զուտ ծախս	21	(631,110)	(123,453)
Կոմիսիոն և այլ վճարների գծով ծախս		(3,530)	(4,364)
Փոխարժեքային տարբերություններից օգուտներ/ (կորուստներ)		69	(180)
Այլ գործառնական եկամուտ	17	165,993	196,406
Անձնակազմի ծախսեր	18	(1,124,480)	(1,165,270)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	19	(681,787)	(672,632)
Շահույթ մինչև հարկումը		2,702,103	3,226,021
Շահութահարկի գծով ծախս	20	(538,099)	(649,682)
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՅՈՒՅԹ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ		2,164,004	2,576,339

9-63 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2019 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
 (հազար ՀՀ դրամով)

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ		3,445,000	14,787,267	18,232,267
Ընդամենը շահույթ և տարվա համապարփակ եկամուտ		-	2,576,339	2,576,339
Հայտարարված շահաբաժիններ	15	-	(565,579)	(565,579)
Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		3,445,000	16,798,027	20,243,027
Ընդամենը շահույթ և տարվա համապարփակ եկամուտ		-	2,164,004	2,164,004
Հայտարարված շահաբաժիններ	15	-	(644,085)	(644,085)
Մնացորդը 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		3,445,000	18,317,946	21,762,946

«ԱՐԵՊԱԿ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՏՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար ՀՀ դրամով)

	Ծան.	2019թ.	2018թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված տոկոսներ		5,142,566	5,147,857
Վճարված տոկոսներ		(352,424)	(300,883)
Վճարված կոմիսիոն վճարներ		(3,530)	(4,365)
Փոխարժեքի տարբերությունից ստացված զուտ եկամուտ		(222)	(179)
Այլ գործառնական եկամուտից մուտքեր		151,715	191,223
Անձնակազմի գծով վճարումներ		(1,152,789)	(1,032,611)
Վարչական և այլ գործառնական ծախսերի վճարումներ		(529,799)	(556,758)
Շահույթահարկի վճարումներ		(621,383)	(902,745)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր, նախքան գործառնական ակտիվներում փոփոխությունները		2,634,134	2,541,539
Հաճախորդներին տրված վարկերի զուտ աճ		(2,610,030)	(537,085)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		24,104	2,004,453
Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(125,136)	(997,929)
Ներդրումային արժեթղթերի մարում		977,132	436,422
Ժամկետային ավանդների շարժ		95,000	(945,000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(195,954)	(11,596)
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից		589	130
Ներդրումային գործունեությունից ստացված / (օգտագործված) զուտ դրամական միջոցներ		751,631	(1,517,973)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարձակալության պարտավորությունների մարում		(34,032)	-
Վճարված շահաբաժիններ	15	(596,982)	(426,514)
Ֆինանսական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		(631,014)	(426,514)
Արտարժույթի դրույթաչափի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		287	(4)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		145,008	59,963
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	4	336,648	276,685
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	4	481,656	336,648

9-63 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամով)**

1. ԼԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «ԱՐԵԳԱԿ» ունիվերսակ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) համար՝ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար, որոնք համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ):

Ընկերությունը հիմնադրվել է 2006 թվականին Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ)՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերության սեփականատերը «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամն է, վերջնական վերահսկող կազմակերպությունը՝ Միավորված մեթոդիստական եկեղեցու օգնության կոմիտեի գլոբալ նախարարությունների Գլխավոր խորհուրդը (UMCOR): Մինչև 2015թ. դեկտեմբերի 1-ը Ընկերության լիիրավ սեփականատերն ու վերջնական վերահսկողն էր ԱՄՔՈՐ-ը: 2015թ. դեկտեմբերի 1-ից Ընկերության 100% բաժնետոմսերը փոխանցվեցին «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամին:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի, անհատական բիզնես և սպառողական վարկերի տրամադրումն է ՀՀ-ում և Լեռնային Ղարաբաղում:

Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ ՀՀ ԿԲ) կողմից: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա, ինչպես նաև 27 մասնաճյուղեր և հինգ ներկայացուցչական գրասենյակներ:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության գլխամասային գրասենյակի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Ամիրյան 4/6, տարածք 152 :

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համապատասխանության մասին հայտարարություն. սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն:

Գործունեության անընդհատության սկզբունք. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Պատրաստման հիմունքները

Ընկերությունն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն: ՖՀՄՍ համաձայն, Ընկերությունն իրականացրել է ճշգրտումներ և վերադասակարգումներ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման նպատակով:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնելիս չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ լիզինգային գործարքների, որը որոշվում է ՀՀՄՍ 17 և ՀՀՄՍ 16 շրջանակներում, և իրական արժեքին որոշակի նմանություն ունեցող գնահատականները, որոնք իրական արժեք չեն հանդիսանում, ինչպիսիք են՝ իրացման գուտ արժեքը՝ ՀՀՄՍ 2-ի շրջանակներում, կամ օգտագործման արժեքը՝ ՀՀՄՍ 36-ի շրջանակներում:

«ԱՐԵՉԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐԱՅՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում մուտքային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի մուտքային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող մուտքային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի մուտքային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի մուտքային տվյալները:

Ընկերությունն ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները հաշվառու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և հաշվետու ամսաթվից հետո ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծան. 21-ում:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («գործառնական արժույթ»): Հայաստանի Հանրապետությունում գործառնական և ներկայացման արժույթը ՀՀ դրամն է: Բոլոր ֆինանսական տվյալները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, բացի այն դեպքերից, երբ դա պահանջվում կամ թույլատրվում է որևէ ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակորեն բացահայտված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնադրույթները ներկայացված են ստորև: Սույն հաշվետվությունում ներկայացված հաշվապահական քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնականություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում գործառնական արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված, գործառնական արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը:

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Պատմական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում՝ դրանց առաջացման ամսում:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից առաջացած օգուտներն ու վնասները ներառվում են զուտ հիմունքով՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից՝ արդյո՞ք արտարժույթի շարժերը զուտ օգուտի կամ զուտ վնասի դիրքում են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջի դրությամբ հետևյալն են.

	Միջին փոխարժեք		Սփյուռ փոխարժեք	
	2019 թ.	2018 թ.	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	478.31	484.63	479.70	483.75
ՀՀ դրամ/1 եվրո	531.67	551.65	537.26	553.65

Տոկոսային եկամուտի և ծախսի ճանաչում. Ֆինանսական գործիքների մասով տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են «զուտ տոկոսային եկամուտում» որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս» շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույթ (EIR) այն տոկոսադրույթն է, որը ճշգրտորեն գեղջում է ֆինանսական գործիքների ապագա գնահատված դրամական հոսքերը ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների զուտ հաշվեկշռային արժեքին: Ապագա դրամական հոսքերը գնահատվում են՝ հիմք ընդունելով գործիքի բոլոր պայմանագրային պայմանները:

Արդյունավետ տոկոսադրույթի հաշվարկը ներառում է բոլոր ապագա վճարման կամ ստացման ենթակա գումարները և միջնորդավճարները պայմանագրային կողմերի միջև, որոնք ուղղակիորեն վերագրելի են որոշակի պայմաններով վարկային պայմանագրին, գործարքի հետ կապված ծախսերին և այլ պարզևավճարներին կամ գեղջերին:

Տոկոսային եկամուտը/տոկոսային ծախսը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթը ոչ-վարկային գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ (ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվներ, նախքան ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գծով պահուստի մասով ճշգրտումները) կամ ֆինանսական պարտավորությունների ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների դեպքում տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթը վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքի նկատմամբ (համախառն հաշվեկշռային արժեքը, հանած ԱՎԿ գծով պահուստը):

Վճարներ և կոմիսիոն ծախսեր. Վճարները և կոմիսիոն ծախսերը իրենց մեջ ներառում են արդյունավետ տոկոսադրույթի անբաժան մաս հանդիսացող վճարներից բացի այլ վճարներ (տես վերոնշյալ բաժինը): Ծառայությունների գծով վճարները և կոմիսիոն ծախսերը հաշվարկվում են ծառայությունների մատուցման ժամանակ:

Ֆինանսական ակտիվներ. Բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում և ապաճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, երբ ֆինանսական ակտիվի ձեռքբերումը կամ վաճառքը համաձայնեցվում է պայմանագրով, և ըստ այդ պայմանագրի պայմանների անհրաժեշտ է ապահովել ֆինանսական ակտիվի մատակարարումը համապատասխան շուկայում սահմանված ժամանակահատվածում, և սկզբնապես չափվում են իրական արժեքով, գումարած գործարքի գծով ծախսերը:

ՖՀՄՍ 9 շրջանակներում ճանաչված բոլոր ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ հիմք ընդունելով կազմակերպության

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը և ֆինանսական ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:
Մասնավորապես՝

- Պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI), հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:
- Պարտքային գործիքներ, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, ինչպես նաև վաճառել պարտքային գործիքները և որոնք ունեն պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, հետագայում չափվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով;
- Բոլոր այլ պարտքային գործիքները (պարտքային գործիքներ իրական արժեքի հիմունքով կառավարվող կամ վաճառքի համար պահվող) և բաժնային գործիքներում ներդրումները հետագայում գնահատվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով

Պարտքային գործիքներ ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող. Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի դասակարգումը և չափումը՝ հիմք ընդունելով ակտիվի՝ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հատկանիշները և ակտիվի կառավարման նպատակով Ընկերության բիզնես մոդելը:

Որպեսզի ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, պայմանագրային պայմանները տեսք է առաջացնեն դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI).

SPPI թեստի նպատակներով, մայր գումար է հանդիսանում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման ժամանակ: Մայր գումարը կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում (եթե առկա են մայր գումարի մարումներ): Տոկոսն իրենից ներկայացնում է հատուցումներ դրամի ժամանակային արժեքի մասով, որոշակի ժամանակահատվածի ընթացքում չմարված մայր գումարի գծով վարկային ռիսկի և այլ հիմնական վարկային ռիսկերի և ծախսերի, ինչպես նաև շահույթի սահմանաչափի մասով: SPPI գնահատումը իրականացվում է այն արժույթով, որով արտահայտվում է ֆինանսական ակտիվը:

Պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, համապատասխանում են հիմնական վարկային համաձայնագրին: Պայմանագրային պայմանները, որոնք ներկայացնում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ենթարկվածությունը ռիսկերին կամ անկայունությանը, որոնք չեն վերաբերվում հիմնական վարկային համաձայնագրին, ինչպիսիք են բաժնետոմսերի կամ ապրանքների գների ռիսկերի ենթարկվածությունը, չեն առաջացնում պայմանագրով նախատեսված դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ: Ստեղծված կամ ձեռք բերված ֆինանսական ակտիվը կարող է հանդիսանալ հիմնական վարկային համաձայնագիր, անկախ այն բանից, արդյոք այն հանդիսանում է վարկ իր իրավական ձևով:

Ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով բիզնես մոդելների գնահատումը իրականացվում է ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի դասակարգումը որոշելու նպատակով: Բիզնես մոդելը կիրառվում է հետադարձ հիմունքներով բոլոր այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք առկա են եղել ՖՀՄՍ 9 սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ: Բանկը որոշում է բիզնես մոդելների այնպիսի մակարդակ, որն արտացոլում է ֆինանսական ակտիվների խմբերի համատեղ կառավարման ձևը հատուկ բիզնես նպատակների իրականացման համար: Բանկի բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի մասով ղեկավարության մտադրություններից,

«ԱՐԵՉԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

հետևաբար, բիզնես մոդելի գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ավելի բարձր մակարդակի համախմբման, այլ ոչ անհատապես դիտարկման սկզբունքը:

Ընկերությունն ունի մեկ բիզնես մոդել ֆինանսական գործիքների կառավարման մասով, որն արտացոլում է Ընկերության՝ իր ֆինանսական ակտիվների կառավարման մեթոդները դրամական հոսքեր ստեղծելու նպատակով: Ընկերության բիզնես մոդելը որոշում է, արդյոք դրամական միջոցները առաջանում են պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքից կամ այս երկու բաղադրիչների կիրառումից:

Բիզնես մոդելը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է հասանելի համապատասխան ողջ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, այս գնահատումը չի իրականացվում հիմք ընդունելով այն սցենարները, որոնք Ընկերությունը չի կարող կանխատեսել, այսպես կոչված «վատագույն իրավիճակ» կամ «սթրեսային իրավիճակ» սցենարները:

Ընկերությունը հաշվի է առնում հետևյալ հասանելի ողջ տեղեկատվությունը՝

- Ինչպես է գնահատվում և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացվում բիզնես մոդելի և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների գործունեության արդյունքները;
- Այն ռիսկերը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում առկա ֆինանսական ակտիվների) գործունեության արդյունքների վրա, և մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մոդելները; և
- Ինչպես են բիզնես կառավարիչները վարձատրվում (արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքի, թե հավաքագրված պայմանագրային դրամական հոսքերի վրա):

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը որոշում է, արդյոք նոր ճանաչված ֆինանսական ակտիվները հանդիսանում են արդեն առկա բիզնես մոդելի մաս կամ արդյոք արտացոլում են նոր բիզնես մոդելի սկիզբը: Ընկերությունը վերագնահատում է իր բիզնես մոդելները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում, որոշելու համար, արդյոք բիզնես մոդելները փոփոխության են ենթարկվել նախորդ ժամանակաշրջանից հետո: Ընթացիկ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը բիզնես մոդելներում փոփոխություններ չի հայտնաբերել:

Այն դեպքում, երբ պարտքային գործիքը, որը չափվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ապաճանաչվում է, ապա կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում: Եվ, հակառակը, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային ներդրումային գործիքների կուտակված օգուտը/վնասը, նախկինում ճանաչված համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ տեղաշարժվում է սեփական կապիտալում: Պարտքային գործիքները, որոնք հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, ենթակա են արժեզրկման:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ են համարվում՝

- ակտիվները այնպիսի պայմանագրային դրամական հոսքերով, որոնք չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI); կամ/ և
- բիզնես մոդելում առկա ակտիվներ, բացառությամբ այն ակտիվների, որոնց նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, կամ հավաքագրել և վաճառել այդ ակտիվները; կամ
- շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ, որոնք օգտագործում են իրական արժեքի մեթոդը

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Այս ակտիվները չափվում են իրական արժեքով, իսկ այդ վերաչափումից առաջացած օգուտները/վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Վերադասակարգում. Եթե բիզնես մոդելը, որի շրջանակներում Ընկերությունը պահում է ֆինանսական ակտիվներ, փոփոխվում է, ապա այդ փոփոխված ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են: Նոր կատեգորիային վերաբերող դասակարգման և չափման պահանջները կիրառվում են հեռանկարային հիմունքներով առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրվանից, բիզնես մոդելի փոփոխությունից հետո, ինչը հանգեցրել է Ընկերության ֆինանսական ակտիվների վերադասակարգմանը: Ֆինանսական ակտիվների փոփոխության և ապաճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ պայմանավորված պայմանագրային դրամական հոսքերի փոփոխությունները ներկայացված են ստորև:

Արժեզրկում. Ընկերությունը ճանաչում է ԱՎԿ-ների գծով պահուստները հետևյալ ֆինանսական գործիքների մասով, որոնք շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չեն չափվում`

- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ;
- Ժամկետային ավանդներ;
- Հաճախորդներին տրված վարկեր;
- Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով;
- Դեբիտորական պարտքեր;

Ակնկալվող վարկային կորուստները (ԱՎԿ) պետք է չափվեն կորուստների գծով պահուստի հաշվառման միջոցով` ստորև նշվածների համարժեք գումարի չափով`

- 12-ամսյա ԱՎԿ-ներ. ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքից ակնկալվող, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի դեֆոլտային իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Ամբողջական ԱՎԿ-ներ: ակնկալվող կորուստներ վարկի գործողության ողջ ընթացքում, այսինքն` կորուստներ, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Փուլ 1 և փուլ 2 սահմանում

Փուլ 1 (միայն վարկեր): 0-30 օր ժամկետանց և առանց վարկային ռիսկի զգալի աճի ցուցանիշների:

Փուլ 2 (միայն վարկեր): 31-90 ժամկետանց կամ ոչ ժամկետանց վարկեր վարկային ռիսկի զգալի աճի ցուցանիշներով:

Ամբողջական ԱՎԿ գծով պահուստի հաշվառում է պահանջվում, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Բոլոր այլ ֆինանսական գործիքների համար ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ի չափով:

ԱՎԿ-ները, վարկային կորուստների ներկա արժեքների` հավանականությամբ կշռված հաշվարկներն են: Դրանք չափվում են Ընկերության պայմանագրային հիմունքներով վճարման ենթակա դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության ներկա արժեքի հիման վրա, որը Ընկերությունը ակնկալում է ստանալ տարբեր տնտեսական սցենարների համեմատության արդյունքում` զեղչված ակտիվի արդյունավետ տոկոսադրույքի չափով:

Միևնույն տնտեսական ռիսկի հատկանիշներ ունեցող վարկային պորտֆելների դեպքում Ընկերությունը ԱՎԿ-ն չափում է հավաքական հիմունքով: Կորուստների գծով պահուստների գնահատումը հիմնվում է ակտիվների ակնկալվող դրամական հոսքերի ներկա արժեքի վրա` կիրառելով ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վարկերի գծով արժեզրկված ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվը «վարկերի գծով արժեզրկվում է» այն ժամանակ, երբ տեղի են ունենում ֆինանսական ակտիվի համար ակնկալվող հետագա կանխիկ դրամական հոսքերի վրա շրջադարձային ազդեցություն ունեցող մեկ կամ ավելի իրադարձություններ: Վարկերի գծով արժեզրկված ֆինանսական

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

ակտիվները համարվում են փուլ 3-ի ակտիվներ: Վարկերի գծով արժեզրկման վկայությունը ներառում է հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտարկել տվյալները՝

- Փոխառուի կամ թողարկողի զգալի ֆինանսական դժվարությունները;
- Պայմանագրի խախտումը, մասնավորապես ուշացումը կամ չկատարումը:

Երբեմն անհնար է առանձնացնել մեկ իրադարձություն, քանի որ մի քանի իրադարձությունների միասնական ազդեցությունն է հանգեցնել ֆինանսական ակտիվների արժեզրկմանը: Ընկերությունը գնահատում է, արդյոք պարտքային գործիքները, որոնք հանդիսանում են ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, համարվում են արժեզրկված յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնահատելու համար, արդյոք պետական և կորպորատիվ պարտքային գործիքները արժեզրկված են, Ընկերությունը հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են պարտատոմսերի եկամտաբերությունը, վարկունակության ցուցանիշը, և վարկառուի կողմից միջոցների ներգրավման կարողությունը:

Վարկը համարվում է արժեզրկված այն ժամանակ, երբ Ընկերությունը զիջումներ է կատարում վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում, եթե առկա չեն վկայություններ այն մասին, որ զիջումների արդյունքում զգալի նվազել են պայմանագրային դրամական միջոցների չստացման հավանականությունն ռիսկերը և չկան արժեզրկման այլ ցուցանիշներ: Այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով նախատեսված են զիջումներ, սակայն տրամադրված չեն, համարվում են արժեզրկված, երբ առկա է դիտարկելի ապացույցներ արժեզրկման վերաբերյալ, ներառյալ դեֆոլտի սահմանման պահանջներին համապատասխանությունը: Դեֆոլտի սահմանումը (տես ստորև) ներառում է վճարունակության անհավանական լինելը, ինչպես նաև գումարների 90 օր կամ ավել ժամկետանց լինելու հավանականությունը:

Դեֆոլտի սահմանումը. ԱՎԿ-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումը օգտագործվում է ԱՎԿ-ի չափը և կորուստների գծով պահուստները 12-ամսյա կամ ամբողջական ԱՎԿ-ի վրա հիմնված լինելը որոշելու համար, քանի որ դեֆոլտը դեֆոլտի հավանականության (ԴԳ) բաղադրիչ է, որն ազդում է ԱՎԿ-ի գնահատման, ինչպես նաև վարկային ռիսկի զգալի աճի հայտնաբերման վրա:

Ընկերությունը ստորև նշված հանգամանքների դեպքում արձանագրում է դեֆոլտ, երբ

- փոխառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց ցանկացած էական վարկային պարտավորություն Ընկերության նկատմամբ, կամ
- հավանական է, որ փոխառուն ամբողջությամբ չի վճարի իր վարկային պարտավորությունները:

Դեֆոլտի սահմանումը համապատասխանեցվում է տարբեր տեսակի ակտիվների տարբեր առանձնահատկություններն արտացոլելու նպատակով:

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման նպատակով Ընկերությունը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկատվությունը: Գնահատված տեղեկատվությունը կախված է ակտիվի տեսակից: Զանակական տեղեկատվությունը ներառում է նույն վարկառուի այլ պարտավորությունների չկատարման կամ վճարի ուշացման մասին տվյալներ, որոնք այս վերլուծության կարևոր մասն են հանդիսանում: Դեֆոլտը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առնում տեղեկատվության տարբեր աղբյուրներ՝ ներքին կամ արտաքին:

Ընկերությունը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները, դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի հնարավոր աճը գնահատելու նպատակով: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Ընկերությունը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով վարկային գործողության ողջ ընթացքի համար հաշվարկվող ԱՎԿ-ի վրա, այլ ոչ 12-ամսյա ԱՎԿ-ի:

Սկզբնական ճանաչումից ի վեր ֆինանսական գործիքի վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման նպատակով Ընկերությունը համեմատում է ֆինանսական գործիքի դեֆոլտի ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հիմնված գործիքի գծով մարման մնացորդային պարտավորության վրա, և ֆինանսական գործիքի տեղի ունեցած դեֆոլտի ռիսկը, որն

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

ակնկալվում էր մնացորդային պարտավորության մարման գծով՝ գործիքի սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ: Այս գնահատումը կատարելիս Ընկերությունը հաշվի է առնում միայն քանակական տեղեկությունները:

Կորպորատիվ վարկավորման դեպքում, կանխատեսումները ներառում են այն ոլորտների ապագա հեռանկարները, որտեղ գործում են Ընկերության պարտապանները, տեղեկություններ, ստացված տնտեսական փորձագետների զեկույցներից, ֆինանսական վերլուծաբաններից, պետական մարմիններից և այլ նմանատիպ կազմակերպություններից, ինչպես նաև փաստացի և կանխատեսական տնտեսական տեղեկությունների տարբեր ներքին և արտաքին աղբյուրներ: Անհատական վարկավորման դեպքում, կանխատեսումները ներառում են կորպորատիվ վարկավորման դեպքում կիրառվող տնտեսական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումներ, ինչպես նաև տեղական տնտեսական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները, մասնավորապես, շրջանների պարագայում՝ տնտեսության որոշ ոլորտների կենտրոնացումը, ինչպես նաև հաճախորդների վարկունակության վերաբերյալ ներքին տեղեկություններ: Ընկերությունը իր գործընկերներին դասակարգում է՝ ըստ համապատասխան ներքին վարկային ռիսկի աստիճանի՝ հիմք ընդունելով իրենց վարկային որակը: Քանակական տեղեկատվությունը հանդիսանում է վարկային ռիսկի զգալի աճի կարևորագույն ցուցանիշ, որը հիմնված է վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող ԴՀ-ի փոփոխությամբ՝ համեմատելով՝

- Վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն հաշվետու ամսաթվի դրությամբ, և
- Վարկի ամբողջ գործողության ընթացքում հաշվառվող մնացած ԴՀ-ն այն ժամանակահատվածի համար, երբ այն գնահատվել է՝ հիմք ընդունելով ռիսկերի սկզբնական ճանաչման ժամանակ առկա փաստերը և հանգամանքները:

Օգտագործվող ԴՀ-ները հանդիսանում են կանխատեսումներ և Ընկերությունը օգտագործում է ԱՎԿ գծով պահուստների գնահատման ժամանակ կիրառված նույն մեթոդաբանությունը և տվյալները:

Ի հավելումս, երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Ընկերությունը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են ամբողջական ԱՎԿ:

Ֆինանսական ակտիվների փոփոխությունը և ապաճանաչումը. Ֆինանսական ակտիվների փոփոխությունները տեղի են ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական հոսքերը կառավարող պայմանագրային պայմանները վերանայվում կամ այլ կերպ փոփոխվում են ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման և ժամկետայնության միջև: Փոփոխությունը ազդեցություն է ունենում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի գումարի և/կամ ժամկետների վրա անմիջապես կամ ապագայում:

Ի լրումս, ընթացիկ վարկային պայմանագրի առկա դրույթների կիրառումը կամ ճշգրտումները կներառեն փոփոխություններ, եթե անգամ այս նոր և ճշգրտված դրույթները առայժմ ազդեցություն չունեն դրամական հոսքերի վրա, բայց կարող են ազդել դրամական հոսքերի վրա, կախված այն բանից, արդյոք այդ դրույթներին համապատասխանում են, թե ոչ (օր.՝ դրույթների չկատարման արդյունքում տոկոսադրույթի աճի փոփոխություն):

Ընկերությունը վերանայում է ֆինանսական դժվարություններ ունեցող հաճախորդների վարկային պայմանագրի պայմանները, որպեսզի ապահովի ստացման ենթակա գումարների առավելագույն հավաքագրումը և նվազագույնի հասցնի ռեֆուլի ռիսկերը: Վարկի պայմանները վերանայվում են այն դեպքում, երբ, չնայած, որ վարկառուն հնարավորինս ամեն ինչ արել է սկզբնական պայմանագրային վճարման պայմանները կատարելու համար, սակայն առկա է վճարումների չկատարման մեծ ռիսկ կամ դա արդեն տեղի է ունեցել, և ակնկալվում է, որ վարկառուն կկարողանա կատարել իր պարտավորությունները վերանայված պայմանների դեպքում: Վերանայված պայմանները հիմնականում ներառում են վարկի մարման ժամկետների երկարաձգում, վարկի դրամական հոսքերի ժամկետների փոփոխություն (մայր գումարի և տոկոսների մարում), վճարման ենթակա գումարների կրճատում (մայր գումարի և տոկոսային գումարների համաներում) և պայմանագրային դրույթների փոփոխություններ:

Ֆինանսական ակտիվի փոփոխման դեպքում Ընկերությունը գնահատում է, արդյոք այս փոփոխության արդյունքում առաջանում է ապաճանաչում: Ընկերության

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Քաղաքականության համաձայն, փոփոխություններն առաջացնում է ապաճանաչում, երբ այդ փոփոխությունը հանգեցնում է էապես տարբերվող այլ պայմանագրային պայմանների առաջացմանը: Որոշելու համար, արդյոք փոփոխված պայմանները էապես տարբերվում են սկզբնական պայմանագրային պայմաններից, Ընկերությունը հաշվի է առնում հետևյալը՝

- Որակական գործոններ, ինչպիսիք են այն պայմանագրային դրամական հոսքերը, որոնք փոփոխությունից հետո չեն հանդիսանում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ, ինչպես նաև փոխարժեքի կամ պայմանագրային կողմի փոփոխությունը, տոկոսադրույքների, ժամկետայնության, պայմանագրային դրույթների փոփոխությունը,

Եթե այս գործոնները չեն պարզաբանում էական փոփոխությունները, ապա՝

- Քանակական գնահատում է իրականացվում համեմատելով սկզբնական պայմաններով մնացած պայմանագրային դրամական հոսքերի ներկա արժեքը և վերանայված պայմաններով պայմանագրային դրամական հոսքերը: Այդ գումարները զեղչվում են սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Եթե ներկա արժեքի տարբերությունը 10 տոկոսից ավել է, ապա Ընկերությունը որոշում է, որ առկա է վարկային պայմանագրի նշանակալի տարբերություն, ինչը հանգեցնում է ապաճանաչման:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ԱՎԿ գծով պահուստները չափվում են ապաճանաչման օրվա դրությամբ ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը այդ օրվա դրությամբ որոշելու նպատակով: Վերանայված հաշվեկշռային արժեքի և նոր պայմաններով նոր ֆինանսական ակտիվի իրական արժեքի միջև տարբերությունը առաջացնում է ապաճանաչման մասով օգուտ կամ վնաս: Նոր ֆինանսական ակտիվը կունենա 12-ամսյա ԱՎԿ-ի հիմունքներով չափվող կորուստների գծով պահուստ, բացառությամբ առանձին դեպքերի, երբ նոր վարկը կհամարվի արժեզրկված առաջացման պահին: Սա կիրառվում է միայն այն դեպքում, երբ նոր վարկի իրական արժեքը ճանաչվում է իր վերանայված անվանական արժեքի նշանակալի զեղչով, քանի որ դեռ առկա է դեֆոլտի ռիսկը, ինչը փոփոխությունների արդյունքում չի նվազել: Ընկերությունը վերահսկում է փոփոխված ֆինանսական ակտիվների վարկային ռիսկը՝ գնահատելով որակական և քանակական տեղեկատվությունը (օր.՝ արդյոք վարկառուն ունի ժամկետանց օրեր նոր պայմանների պարագայում):

Երբ ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները փոփոխվում են, ինչը ապաճանաչման չի հանգեցնում, Ընկերությունը որոշում է, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, համեմատելով՝

- Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ և սկզբնական պայմանագրային պայմաններով գնահատված ամբողջական ԴՀ-ն, և
- Հաշվետու ամսաթվի դրությամբ փոփոխված պայմանագրային պայմաններով ամբողջական ԴՀ-ն:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ վարկային պայմանների վերանայման քաղաքականության շրջանակներում փոփոխված ֆինանսական ակտիվներին, երբ այդ փոփոխության արդյունքում ապաճանաչում չի առաջացել, ապա ԴՀ-ի գնահատումն արտացոլում է Ընկերության կարողությունը հավաքագրել փոփոխված պայմաններով դրամական հոսքերը՝ հիմք ընդունելով Ընկերության նախկին փորձը նմանատիպ համաներման գործընթացների պարագայում, ինչպես նաև տարբեր վարքագծային ցուցանիշներ, որոնք են՝ վարկառուի պարտաճանաչ վճարման կարողությունը փոփոխված պայմանագրային պայմաններում: Եթե վարկային ռիսկը շարունակում է մնալ ավելի բարձր, քան ակնկալվում էր սկզբնական ճանաչման ժամանակ, ապա կորուստների գծով պահուստը կրկին չափվելու է ամբողջական ԱՎԿ-ին համարժեք գումարով: Վերանայված պայմաններով վարկերի մասով կորուստների գծով պահուստը հիմնականում կչափվի՝ հիմք ընդունելով 12-ամսյա ԱՎԿ, երբ առկա է վարկառուի վճարունակության բարելավման վկայություն, ինչն առաջացնում է նախկինում վարկային ռիսկի նշանակալի աճի նվազեցում:

Այն դեպքում, երբ փոփոխությունների արդյունքում ապաճանաչում չի առաջանում, Ընկերությունը հաշվարկում է այդ փոփոխությունների օգուտը/վնասը՝ համեմատելով համախառն հաշվեկշռային արժեքը փոփոխությունից առաջ և հետո (բացառությամբ ԱՎԿ

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

գծով պահուստը): Այնուհետև, Ընկերությունը գնահատում է ԱՎԿ-ն փոփոխված ակտիվի մասով, երբ փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացած ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են սկզբնական ակտիվից՝ ակնկալվող դրամական միջոցների նվազեցման հաշվարկում:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (ներառյալ էապես տարբեր պայմանագրային պայմանների փոփոխման արդյունքում առաջացած սպառումը) կամ երբ ֆինանսական ակտիվի և վերջինիս սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են երրորդ կողմի: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս ակտիվի հաշվեկշռային արժեքի և ստացված և ստացման ենթակա հատուցումների և կուտակային օգուտի/վնասի գումարի տարբերությունը, որը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվել սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ բաժնային ներդրումային գործիքների, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքով չափվող, երբ կուտակային օգուտը/վնասը, նախկինում ճանաչված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվը մասնակի ապաճանաչելիս (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետզհետե օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Սա չի կիրառվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող բաժնային ներդրումային գործիքների մասով, քանի որ այլ համապարփակ եկամուտում նախկինում ճանաչված կուտակված օգուտը/վնասը հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

Դուրսգրում. Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվի վերականգնման (ամբողջական կամ մասնակի) ողջամիտ ակնկալիքներ: Այս դեպքում Ընկերությունը որոշում է, որ վարկառուն չունի համապատասխան ակտիվներ կամ եկամտի բավարար աղբյուրներ դուրս գրման ենթակա գումարների մարման նպատակով բավարար դրամական միջոցներ ստեղծելու համար: Դուրսգրումը ներառում է ապաճանաչման իրադարձություն: Ընկերությունը կարող է դուրս գրված ֆինանսական ակտիվների նկատմամբ հարկադիր միջոցներ կիրառել: Ընկերության գործադրած հարկադիր միջոցների արդյունքում հավաքագրված գումարները արժեզրկման գծով օգուտ կառաջացնեն:

ԱՎԿ գծով պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում. ԱՎԿ գծով պահուստները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ՝

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների դեպքում կորուստների գծով ոչ մի պահուստ չի ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ հաշվեկշռային արժեքը չափվում է իրական արժեքով: Այնուամենայնիվ, կորուստների գծով պահուստը

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

ներառվում է ներդրումների վերագնահատման պահուստի վերագնահատման արժեքում,

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են կամ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետզման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ դեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից կամ պայմանական վճարից, որը կարող է վճարվել ձեռք բերողի կողմից որպես բիզնեսի միավորման մաս, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՖՅՄՍ 9 ստանդարտը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սահմանվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» հոդվածում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում:

Այնուամենայնիվ, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների մասով, երբ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկի փոփոխությանը, ճանաչվում է այլ համապարփակ եկամուտում, եթե այլ համապարփակ եկամուտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկի փոփոխության ազդեցության ճանաչումը չի առաջացնում կամ մեծացնում հաշվառման անհամապատասխանությունը շահույթում կամ վնասում: Պարտավորության իրական արժեքի փոփոխության մասով մնացած գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ եկամուտում

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

ճանաչված ֆինանսական պարտավորության վարկային ռիսկերին վերագրելի իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, այլ փոխանցվում են չբաշխված շահույթ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչելիս:

Այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, արդյոք այլ համապարփակ եկամուտում ճանաչված պարտավորության վարկային ռիսկերի փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն է առաջացրել կամ այդ անհամապատասխանությունը մեծացրել, ապա գնահատում է, արդյոք պարտավորության վարկային ռիսկերի փոփոխության ազդեցությունը հաշվանցվելու է շահույթում կամ վնասում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքի իրական արժեքի փոփոխությամբ պայմանավորված: Այս որոշումը կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վարկերը և փոխառությունները) սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքի գծով ծախսերը: Դրանք այնուհետև չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի և տոկոսային ծախսը համապատասխան ժամանակաշրջանում տեղաբաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն ավելի մանրամասն ներկայացված է վերոնշյալ «գուտ տոկոսային եկամուտ» բաժնում:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Նմանապես, Ընկերությունը հաշվի է առնում գոյություն ունեցող պարտավորության պայմանների կամ դրա մի մասի նշանակալի փոփոխությունը որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանագրային պայմանները զգալիորեն տարբերվում են այն դեպքում, երբ նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը (ներառյալ վճարված գումարները, հանած յուրաքանչյուր վճար, ստացված և զեղչված՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը) առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի զեղչված ներկա արժեքից:

Գործառնական արժույթ. ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում վարկային կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը: Ընկերության և նրա ներկայացման գործառնական արժույթը ՀՀ ազգային տարադրամը՝ ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ):

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են համապատասխան գործառնական արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական բաղաբանության մեջ:

Եկամուտ տույժերից և տուգանքներից. Տույժ-տուգանքներից ստացված եկամուտը ճանաչվում է իրական կանխիկի հիմունքներով: Դեկավարության գնահատմամբ հաշվեգրման և կանխիկի հիմունքների միջև տարբերությունները գրեթե հավասար են:

Եկամուտներ հետգնման պայմանագրերով. Վերոնշյալ գործիքների վաճառքից եկամուտը/կորուստը շահույթի կամ կորստի հաշվետվության մեջ ճանաչվում են որպես տոկոսային եկամուտ կամ ծախս՝ հիմնվելով հետգնման արժեքի և վաճառքի գնի միջև առկա տարբերության վրա, երբ նման գործիքները վաճառվում են երրորդ կողմերին: Երբ հակադարձ ռեպոն/ռեպոն կատարվում է իր նախնական պայմաններով, վաճառքի և սկզբնական պայմանագրով բանակցված հետգնման արժեքի արդյունավետ շահույթը/տոկոսադրույքը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի միջոցով:

Հարկում. Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ ելության, ուժի մեջ մտած հարկի դրույթաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկվող շահույթի հաշվարկման ժամանակ կիրառվող հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա: Ի հավելումն, հետաձգված հարկային պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերություններն ի հայտ են գալիս գուղվիլի նախնական ճանաչման արդյունքում:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների և համատեղ ձեռնարկումներում մասնակցության հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը և երբ հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նման ներդրումների և մասնակցության հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, երբ հավանական է, որ կլինի բավարար հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերություններից առաջացած օգուտը և երբ ակնկալվում է այդ տարբերությունների հակադարձումը տեսանելի ապագայում:

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Յետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Յետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Յետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են նաև այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Երբ ընթացիկ կամ հետաձգված հարկն առաջանում է բիզնեսի միավորման նախնական հաշվապահական հաշվառման արդյունքում, հարկային ազդեցությունը ներառվում է բիզնեսի միավորման հաշվապահական հաշվառման մեջ:

Պահուստներ պարտավորությունների և վճարների համար. պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունը, որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ներկա պարտավորություն (իրավաբանորեն սահմանված կամ ենթադրվող), և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի մարել այդ պարտավորությունը, ինչպես նաև հնարավոր է արժանահավատորեն գնահատել պարտավորության չափը:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն հաշվարկը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ երրորդ կողմն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Շահաբաժիններ. Ընկերության շահաբաժիններ հայտարարագրելու և վճարելու կարողությունը կարգավորվում է Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով: Սովորական բաժնետոմսերին վերաբերող շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթից հատկացումներ այն ժամանականաշրջանում, որում շահաբաժինները հայտարարագրվել են:

Գրավ. Ընկերությունը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Ընկերությանը վերապահվում է պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ՝ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, բանկերից ստացման ենթական գումարները՝ սկզբնապես սահմանված 90 օր կամ պակաս ժամկետայնությամբ և պայմանագրային պարտավորվածություններից զերծ:

Ժամկետային ավանդներ. բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդները ներառում են բանկերում պահվող ավանդները երեք ամսից ավել սկզբնական մարման

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Ժամկետով: Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդները հաշվարկվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բռնագանձված ակտիվներ. որոշակի հանգամանքներում, ակտիվները բռնագանձվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Բռնագանձված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ. հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, եթե կան այդպիսիք:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է գրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

	<i>Օգտակար ծառայությունը՝ տարիներով</i>
• Շինություններ	20-ից 30
• Փոխադրամիջոցներ	5-ից 10
• Համակարգիչներ և կապի միջոցներ	3-ից 10
• Գրասենյակային գույք	5-ից 10
• Այլ	5-ից 20

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ. ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են՝ հիմք ընդունելով առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման համար կատարված ծախսերը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է մինչև 10 տարի:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուղվից.

յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, որոնք գործում են ընթացիկ տարվա համար

ՖՀՄՍ 16 Վարձակալություն ստանդարտի սկզբնական կիրառման ազդեցությունը

Ընթացիկ տարում Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 16 ստանդարտը (ինչպես հրապարակվել է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

2016թ. հունվար ամսին), 2019 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է նոր կամ փոփոխված պահանջներ՝ վարձակալության հաշվապահական հաշվառման մասով: Այն իրենից ներկայացնում է զգալի փոփոխություններ վարձակալական հաշվապահական հաշվառման մեջ՝ վերացնելով գործառնական և ֆինանսական վարձակալությունների միջև տարբերությունը և պահանջելով ակտիվների օգտագործման իրավունքը և վարձակալության գծով պարտավորությունների ճանաչումը՝ բոլոր վարձակալությունների սկզբին՝ բացառությամբ կարճաժամկետ և փոքրածեք ակտիվների վարձակալությունների, երբ ընդունվում են նմանատիպ ճանաչման մասով բացառությունները: Ի հակադրություն վարձակալության հաշվապահական հաշվառման, վարձատուի հաշվապահական հաշվառման պահանջները մեծ մասամբ մնացել են անփոփոխ: Ստորև ներկայացված է ՖՀՄՍ 16 ընդունման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության համար ՖՀՄՍ 16 սկզբնական կիրառման ամսաթիվը 2019թ. հունվարի 1-ն է:

(ա) Վարձակալության նոր սահմանման ազդեցությունը

Ընկերությունն օգտագործել է ՖՀՄՍ 16-ին անցում կատարելու գործնական կիրառման հնարավորությունը, որպեսզի չգնահատի՝ արդյոք պայմանագիրը հանդիսանում է կամ ներառում է վարձակալություն: Հետևաբար, վարձակալության սահմանումը, ՀՀՄՍ 17 և ՀՀՄՍԿ 4 ստանդարտների համաձայն, շարունակվելու է կիրառվել այն վարձակալությունների մասով, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել նախքան 2019թ. հունվարի 1-ը:

Վարձակալության սահմանման մեջ փոփոխությունը վերաբերում է հիմնականում վերահսկողությանը: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, արդյոք պայմանագիրը պարունակում է վարձակալություն՝ հիմք ընդունելով այն փաստը, արդյոք հաճախորդը իրավունք ունի վերահսկել որոշակի ակտիվի օգտագործումը որոշակի ժամանակահատվածում հատուցման փոխարեն: Սա հակադրվում է ՀՀՄՍ 17 և ՀՀՄՍԿ 4 ստանդարտներում կիրառվող «ռիսկեր և հատուցումներ» հասկացություններին:

Ընկերությունը կիրառում է վարձակալության սահմանումը և համապատասխան ուղեցույցը, սահմանված ՖՀՄՍ 16 ստանդարտում, բոլոր այն վարձակալական պայմանագրերի նկատմամբ, որոնք ուժի մեջ են մտել կամ փոփոխվել 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո: Առաջին անգամ ՖՀՄՍ 16-ի կիրառմանը պատրաստվելիս՝ Ընկերությունն իրականացրել է իրականացման ծրագիր: Ծրագիրը ցույց է տվել, որ ՖՀՄՍ 16 նոր սահմանումը զգալիորեն չի փոխի պայմանագրերը, որոնք համապատասխանում են Ընկերության վարձակալության սահմանմանը:

(բ) Ազդեցությունը վարձակալի հաշվապահական հաշվառման վրա

(i) Նախկին գործառնական վարձակալություն

ՖՀՄՍ 16 ստանդարտը փոխում է Ընկերության կողմից վարձակալության հաշվառման կարգը, որը նախկինում դասակարգվել է որպես գործառնական վարձակալություն, համաձայն ՀՀՄՍ 17 ստանդարտի, և համարվել արտահաշվեկշռային:

ՖՀՄՍ 16 կիրառման դեպքում բոլոր վարձակալությունների մասով (բացառությամբ ներքոնշյալների) Ընկերությունը՝

- ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունքը և վարձակալության պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որը սկզբնապես չափվել է ապագա վարձավճարների ներկա արժեքի հիման վրա;
- ճանաչում է ակտիվի օգտագործման իրավունքը մաշվածությունը և վարձակալության պարտավորությունների գծով տոկոսները շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում;
- Տարանջատում է վճարված դրամական միջոցների ընդհանուր գումարը ըստ մայր գումարի (ներկայացված ֆինանսական գործունեությունում) և տոկոսի (ներկայացված գործառնական գործունեությունում) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Վարձակալական պայմանագրի կնքման խրախուսող պայմանները (առանց վարձավճարի օգտագործման ժամանակահատված) ճանաչվում են որպես ակտիվի օգտագործման իրավունք և վարձակալության պարտավորությունների չափման մաս, այնինչ ՀՀՄՍ 17-ի համաձայն, դրանք հանգեցրել են պայմանագրային պարտավորության խրախուսող պայմանների ճանաչմանը, ամորտիզացված որպես վարձավճարի գծով ծախսերի նվազեցում՝ հիմնվելով գծային մեթոդի վրա: ՀՀՄՍ 16-ի շրջանականներում, ակտիվի օգտագործման իրավունքը պետք է գնահատվի են արժեզրկման առկայության համար, ըստ ՀՀՄՍ 36 Ակտիվների արժեզրկում ստանդարտի:

(ii) Նախկին ֆինանսական վարձակալություն

ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 17 ստանդարտների հիմնական տարբերությունը նախկինում ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների մասով հանդիսանում է վարձակալի կողմից վարձատուին մնացորդային արժեքի մասով տրամադրվող երաշխիքների չափումը: ՀՀՄՍ 16 ստանդարտը պահանջում է, որպեսզի Ընկերությունը ճանաչի որպես վարձակալության պարտավորության մաս միայն այն գումարը, որը ենթակա է վճարման մնացորդային արժեքի երաշխավորության մասով, սակայն ոչ երաշխավորված առավելագույն գումարի մասով, ինչպես պահանջվում է ՀՀՄՍ 17-ով: ՀՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումն ազդեցություն չի ունեցել, քանի որ Ընկերությունը չունեի ֆինանսական վարձակալություն 2019թ. հունվարի 1-ի դրությամբ:

(գ) ՀՀՄՍ 16-ի նախնական կիրառման ֆինանսական ազդեցությունը

ՀՀՄՍ 16 ստանդարտի կիրառումը վարձակալություններում, որը նախկինում ՀՀՄՍ 17-ի համաձայն դասակարգվել է որպես գործառնական վարձակալություններ, հանգեցրել է 412,272 հազար ՀՀ դրամ արժողությամբ ակտիվի օտագործման իրավունքի և 402,044 հազար ՀՀ դրամ արժողությամբ վարձակալության պարտավորության ճանաչման 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Օգտագործված գեղջման դրույքը կազմում է 11.83%: Միջին կշռված վարձակալության ժամկետը 9 տարի է:

2019թ. հունվարի 1

Գործառնական վարձակալության պարտավորությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	254,688
Չեղջման ազդեցությունը	(2,486)
Վարձակալության վճարների ներկա արժեքը պայմանավորված վարձակալության ժամկետի երկարացման հնարավորությամբ, որոնք ներառված են վարձակալության ժամկետում և նախկինում չեն ներառվել գործառնական վարձակալական պարտավորություններում	149,842
Վարձակալության պարտավորությունները 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	402,044

(դ) Ազդեցությունը վարձատուի հաշվապահական հաշվառման վրա

ՀՀՄՍ 16-ի համաձայն, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն՝ դրանք հաշվառելով տարբեր հիմունքներով: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 16-ը փոփոխել և ընդլայնել է պահանջվող բացահայտումները, մասնավորապես, թե ինչպես է վարձատուն կառավարում վարձակալված ակտիվներում մնացորդային տոկոսներից առաջացող ռիսկերը:

ՀՀՄՍ 16-ի համաձայն, միջանկյալ վարձատուն դիտարկում է հիմնական վարձակալության և ենթավարձակալության պայմանագրերը որպես առանձին պայմանագրեր: Միջանկյալ վարձատուն պարտավոր է դասակարգել ենթավարձակալությունը որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն՝ հղում կատարելով հիմնական վարձակալությունից առաջացող օգտագործման իրավունքով ակտիվին (առանց հղում կատարելու հիմնական ակտիվին՝ ՀՀՄՍ 17-ով նախատեսված):

ՀՀՄՍ 16-ի կիրառումը զգալի ազդեցություն չի ունեցել ֆինանսական հաշվետվությունների վրա՝ գործող կարճաժամկետ վարձակալական պայմանագրերի շնորհիվ: Դեկավարությունը գնահատում է, որ հաջորդող 12 ամիսների ընթացքում Ընկերությունը ամենայն հավանականությամբ կգրադեցնի նոր տարածքներ:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Փոփոխություններ \$ՀՄՍ 9 ստանդարտում. Կանխավճարներ բացասական փոխհատուցումով

Ընկերությունն առաջին անգամ ընդունել է \$ՀՄՍ 9 ստանդարտում փոփոխությունները ընթացիկ տարում: \$ՀՄՍ 9-ի փոփոխությունները գնահատում են, արդյոք կանխավճար բաղադրիչը բավարարում է միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI) թեստի պայմաններին, երբ պայմանագրի կողմը, կիրառելով այդ տարբերակը, կարող է վճարել կամ ստանալ խելամիտ փոխհատուցում կատարված կանխավճարի դիմաց, անկախ կանխավճարի նպատակից: Այլ կերպ ասած, բացասական փոխհատուցումով կանխավճարները ոչ միշտ է, որ միանշանակորեն չեն բավարարում միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (SPPI) թեստի պայմաններին:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված \$ՀՄՍ-ներ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված \$ՀՄՍ ստանդարտները՝ հրապարակված, սակայն դեռևս չգործող: Ստորև ներկայացված ազդեցությունները ընդհանուր բնույթ են կրում և յուրաքանչյուր կոնկրետ կիրառություն պետք է առանձին դիտարկվի:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդարտներում

Եականության սահմանումը

\$ՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային

Հայեցակարգային հիմունքներ

Հիմունքների հղումների փոփոխությունները

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 ստանդարտներում Եականության սահմանումը.

Այս փոփոխությունների նպատակն է տալ «Եականություն» տերմինի ավելի հասկանալի սահմանում ՀՀՄՍ 1 ստանդարտում և մտադրություն չունեն փոխել Եականության հասկացությունը \$ՀՄՍ ստանդարտներում: «Անորոշ» Եական տեղեկատվություն և ոչ Եական տեղեկատվություն հասկացությունները ընդգրկվել են նոր սահմանման մեջ:

Օգտագործողների որոշումների վրա ազդող Եականության շեմի հասկացությունը «կարող է ազդել» եզրույթից փոփոխվել է՝ դառնալով «հավանականորեն հնարավոր է ազդեցություն ունենալ»:

ՀՀՄՍ 8-ում Եականության սահմանումը փոխարինվել է ՀՀՄՍ 1-ում Եականության սահմանման հղումով: Ի լրումն, ՀՀՄՍ-ն փոփոխել է այլ Ստանդարտներն ու Հայեցակարգային հիմունքները, որոնք ներառում են Եականության սահմանումը կամ հղում են կատարում «Եական» տերմինին ստանդարտներին համապատասխանությունը ապահովելու նպատակով:

Այս փոփոխությունները կիրառվում են հեռանկարային հիմունքներով 2020 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, որոնց վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Ղեկավարությունն ակնկալում է, որ սույն չգործող նոր և վերանայված \$ՀՄՍ-ների կիրառումը զգալի ազդեցություն չի ունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

\$ՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների

փոփոխությունները. Վերանայված Հայեցակարգային Հիմունքներին զուգահեռ, որոնք գործում են 2018թ. մարտի 29-ին հրապարակումից ի վեր, ՀՀՄՍ-ն նաև թողարկեց փոփոխություններ \$ՀՄՍ ստանդարտներում Հայեցակարգային Հիմունքների հղումների մասով: Փաստաթուղթը ներկայացնում է փոփոխություններ \$ՀՄՍ 2-ում, \$ՀՄՍ 3-ում, \$ՀՄՍ 6-ում, \$ՀՄՍ 14-ում, ՀՀՄՍ 1-ում, ՀՀՄՍ 8-ում, ՀՀՄՍ 34-ում, ՀՀՄՍ 37-ում, ՀՀՄՍ 38-ում, \$ՀՄՍ 12-ում, \$ՀՄՍ 19-ում, \$ՀՄՍ 20-ում, \$ՀՄՍ 22-ում և ՍԻՀ 32-ում:

Այուևամենայնիվ ոչ բոլոր փոփոխություններն են վերանայվում Հիմունքների հղումների և դրանց մեջբերումների հրապարակումներով, որպեսզի դրանք վերաբերվեն վերանայված Հայեցակարգային Հիմունքներին: Որոշ հրապարակումներ վերանայվում են միայն այն նպատակով, որպեսզի ցույց տան, թե Հիմունքների որ տարբերակին են հղում տալիս (ՀՄՍ Հիմունքներ՝ ընդունված ՀՀՄՍ-ի կողմից 2001 թվականին, 2010 թ. ՀՀՄՍ Հիմունքներ կամ 2018թ. նոր վերանայված Հիմունքներ) կամ որպեսզի ցույց տան, որ ստանդարտում սահմանումները չեն փոփոխվել վերանայված Հայեցակարգային Հիմունքների նոր սահմանումներով:

«ԱՐԵՂԱԿ» ՈՆԻՎԵՐՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Թարմացված փոփոխությունները կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից սկսված տարեկան ժամանակաշրջանների համար՝ նախնական կիրառմամբ: Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱԳԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱԳԱՅԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Ընկերության ղեկավարությանը անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ վերանայումը տեղի է ունենում, եթե վերանայումը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ վերանայումը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե վերանայումն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Բիզնես մոդելի գնահատումը. Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը հիմնված են SPPI թեստի և բիզնես մոդելի թեստի արդյունքների վրա: Ընկերությունն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որն արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրված մեթոդները: Այս գնահատումը ներառում է դատողություններ, որոնք արտացոլում են համապատասխան փաստարկներ այն մասին, թե ինչպես է գնահատվում և չափվում ակտիվների գործունեությունը, ակտիվների գործունեության վրա նշանակալի ազդեցություն ունեցող ռիսկերը, դրանց կառավարման ձևերը, և ինչպես են փոխհատուցվում ակտիվների կառավարիչները: Ընկերությունը վերահսկում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները, որոնք ապաճանաչվել են նախքան մարման ժամկետի ավարտը, որպեսզի պարզի դրանց օտարման պատճառները այն, թե արդյոք այդ պատճառները համապատասխանում են այն բիզնես նպատակներին, որոնց համար այդ ակտիվները պահվել են: Մոնիթորինգը հանդիսանում է Ընկերության շարունակական գնահատման գործընթացի մաս, որի օգնությամբ որոշվում է, թե արդյոք բիզնես մոդելը, որի համար պահվել են մնացած ֆինանսական ակտիվները, շարունակում է համապատասխան մնալ և, եթե չի համապատասխանում, արդյոք տեղի են ունեցել բիզնես մոդելի փոփոխություններ, և, ըստ այդմ, նաև հետագայում այդ ակտիվների դասակարգման փոփոխություններ:

Վարկային ռիսկի նշանակալի աճ. Ինչպես պարզաբանվում է ծան. 2-ում, ԱՎԿ-ները չափվում են որպես պահուստներ, որոնք համարժեք են փուլ 1-ում գտնվող ակտիվների մասով 12-ամսյա ԱՎԿ-ներին կամ փուլ 2 կամ 3-ում գտնվող ակտիվների ամբողջական ԱՎԿ-ներին: Ակտիվը տեղափոխվում է փուլ 2, եթե ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ է գրանցվել: Ակտիվի զգալի աճի գնահատման նպատակով Ընկերությունը հաշվի է առնում որակական և քանակական ողջամիտ ու կանխատեսումների վրա հիմնված տեղեկությունները:

Վարկային ռիսկերի համանման հատկանիշներով ակտիվների խմբերի ստեղծում. ԱՎԿ-ն հավաքական հիմունքով չափելու դեպքում ֆինանսական գործիքները խմբավորվում են՝ ըստ ռիսկի համանման հատկանիշների: Ընկերությունը վարկային ռիսկի հատկանիշների համապատասխանության մոնիտորինգ է իրականացնում շարունակական հիմունքներով, որպեսզի գնահատի, թե արդյոք դրանք դեռևս համանման են: Այս մոնիտորինգն անհրաժեշտ է իրականացնել վարկային ռիսկերի հատկանիշների փոփոխության դեպքում ակտիվների համապատասխան վերասեգմենտավորում կամ վերաբաշխում ապահովելու համար: Դա կարող է հանգեցնել նոր պորտֆելների ստեղծմանը կամ ակտիվների տեղափոխմանը արդեն բնորոշ համանման վարկային ռիսկերի հատկանիշները: Պորտֆելների վերասեգմենտավորումը և պորտֆելների միջև շարժը հաճախ տեղի է ունենում այն ժամանակ, երբ առկա է վարկային ռիսկի զգալի աճ (կամ այդ վարկային ռիսկի զգալի աճը հակադարձվում է) և, այսպիսով, ակտիվները տեղափոխվում են 12-ամսյա ԱՎԿ-ից ամբողջական ԱՎԿ, կամ հակառակը: Սակայն, դա կարող է տեղի ունենալ նաև այն

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

պորտֆելներում, որոնք շարունակում են գնահատվել նույն՝ 12-ամսյա կամ ամբողջական ԱՎԿ-ների հիմունքով, սակայն ԱՎԿ-ների գումարը փոփոխվում է, քանի որ պորտֆելների վարկային ռիսկերը տարբերվում են:

Կիրառված մոդելները և ենթադրությունները. Ընկերությունը ԱՎԿ գնահատման և ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափման նպատակով օգտագործում է բազմազան մոդելներ և ենթադրություններ: Անհրաժեշտ է դատողություն կիրառել յուրաքանչյուր տեսակի գործիքի համար առավել հարմար մոդելի հայտնաբերման, ինչպես նաև այս մոդելներում օգտագործված ենթադրությունները որոշելու համար, ներառյալ այն ենթադրությունները, որոնք վերաբերում են վարկային ռիսկի աճի հիմնական խթաններին:

Դեֆոլտի հավանականությունը. ԴՅ-ն ակնկալվող վարկային կորստի չափման հիմնական ելակետային տվյալն է: ԴՅ-ն որոշակի ժամանակահատվածում դեֆոլտի հավանականությունն է: Հաշվարկը հիմնված է պատմական տվյալների, ենթադրությունների և հետագա հանգամանքների ակնկալիքների վրա:

Դեֆոլտից առաջացած վնաս. Դեֆոլտից առաջացած վնասը (ԴԱՎ - LGD) վարկի արժեզրկումից առաջացած կորստի հաշվարկն է: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատունն հույս ունի ստանալ, ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը և այլ վարկային գործիքները:

ԱՎԿ-ի չափումը. ԱՎԿ-ի չափման համար օգտագործվում են հետևյալ բաղադրիչները՝

- Դեֆոլտի հավանականություն (PD)
- Դեֆոլտից առաջացած վնաս (LGD)
- Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեք (EAD).

Այս թվերը ստացվում են ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք ճշգրտվում են ապագային վերաբերող տեղեկության արտացոլման նպատակով՝ հիմնվելով վիճակագրական հավանականության վրա:

ԴՅ-ն որոշակի ժամանակահատվածում դեֆոլտի հավանականությունն է: Հաշվարկը հիմնված է վիճակագրական վարկանիշային մոդելների վրա և գնահատվում է՝ օգտագործելով վարկանիշային գործիքներ, որոնք համապատասխանում են վարկատուների և ռիսկերի տարբեր կատեգորիաների: Այս վիճակագրական մոդելները հիմնված են շուկայային տվյալների վրա (առկայության դեպքում), ինչպես նաև քանակական և որակական ցուցանիշներից բաղկացած ներքին տվյալների վրա: ԴՅ-ները գնահատվում են՝ հիմք ընդունելով ռիսկերի պայմանագրային մարման ժամկետները և ենթադրյալ կանխավճարների տոկոսադրույթները:

Գնահատումը հիմնված է առկա պայմանների վրա, որոնք համապատասխանեցվում են՝ հաշվի առնելով ԴՅ-ի վրա ազդեցություն ունեցող ապագա պայմանները:

Դեֆոլտից առաջացած վնասը վարկի արժեզրկումից առաջացած կորստի հաշվարկն է: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատունն հույս ունի ստանալ, ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Գրավով ապահովված վարկերի համար LGD մոդելները դիտարկում են գրավի ապագա գնահատման կանխատեսումները՝ հաշվի առնելով վաճառքի ժամանակ կիրառվող զեղչերը, վարկի իրացման ժամկետները, միջվարկային գրավով ապահովվածությունը և հիմունքների առաջնահերթությունը, գրավի իրացման արժեքը և դեֆոլտի փուլից վերադարձի դրույթները (պարտավորությունների չկատարման կարգավիճակից դուրս գալով): Գրավով չապահովված վարկերի համար LGD մոդելները հաշվի են առնում վերականգնման ժամկետները, վերականգնման դրույթները և հիմունքների առաջնահերթությունը: Հաշվարկն իրականացվում է զեղչված դրամական հոսքերի հիման վրա, որտեղ դրամական միջոցների հոսքերը զեղչվում են վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Կանխատեսումների ներառում. ԱՎԿ-ի չափման ժամանակ Շնկերությունը կանխատեսված տեղեկություններ է օգտագործում վարկային ռիսկի զգալի աճի գնահատման, ինչպես նաև ԱՎԿ-ի չափման ժամանակ: Ընկերության փորձագետները օգտագործում են արտաքին և ներքին տեղեկատվություն ստեղծելու համար համապատասխան տնտեսական փոփոխականների ապագա կանխատեսումների «հիմնական» սցենարը, ինչպես նաև այլ հնարավոր կանխատեսումների սցենարների ներկայացուցչական շրջանակը: Օգտագործված արտաքին տեղեկատվությունը ներառում է պետական մարմինների և ֆինանսական ոլորտի մասնագետների կողմից հրապարակված տնտեսական տվյալներ և կանխատեսումներ:

4. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՆԵՐ

Դրամական հոսքերի մասին հաշվետվության նպատակով, դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամ դրամարկղում և բանկերում հանած բանկային օվերդրաֆտի մնացորդը՝ եթե այդպիսիք առկա են: Դրամական հոսքերի մասին հաշվետվությունում առկա դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում, կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածների հետ, ինչպես նշված է հետևյալում՝

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Կանխիկ դրամ	10,659	10,064
Ցպահանջ բանկային հաշիվներ	370,982	75,269
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ՝ երեք ամսից պակաս սկզբնական մարման ժամկետով Նվազեցում՝ արժեզրկման կորուստների գծով պահուստ	100,015 (231)	251,315 (1,230)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	481,425	335,418

ՖՀՄՍ 9-ի համաձայն, արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2019թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2019թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,230	1,230
Տարվա վերականգնում	(999)	(999)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	231	231

ՖՀՄՍ 9-ի համաձայն, արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2018թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2018թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,390	1,390
Տարվա վերականգնում	(160)	(160)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,230	1,230

5. ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Բանկերում տեղաբաշխված միջոցներ՝ երեք ամսից ավել սկզբնական մարման ժամկետով՝ ՀՀ ամենախոշոր 10 բանկեր	2,452,109	2,742,514
Այլ ՀՀ բանկեր	755,620	516,243
Նվազեցում՝ արժեզրկման կորուստների գծով պահուստ	(8,584)	(28,488)
Ընդամենը ժամկետային ավանդներ	3,199,145	3,230,269

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

ՖՀՄՍ 9-ի համաձայն, արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2019թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2019թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	28,488	28,488
Տարվա վերականգնում	(19,904)	(19,904)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,584	8,584

ՖՀՄՍ 9-ի համաձայն, արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2018թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2018թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	28,056	28,056
Տարվա վերականգնում	432	432
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,488	28,488

6. ՀԱՃԱԽՈՐՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Բիզնես վարկեր		
Փոքր ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին տրվող վարկեր	2,768,205	1,523,595
Վարկեր անհատներին		
Փոքր և միջին վարկեր	13,832,622	14,227,518
Սպառողական և անձնակազմին տրվող վարկեր	3,928,138	2,307,365
Նվազեցում վարկերի արժեզրկումից պահուստ	(1,034,951)	(554,458)
Ընդամենը հաճախորդներին տրվող վարկեր	19,494,014	17,504,020

Անգնակազմին տրվող վարկերը 551,975 հազար դրամ (2018 թ.՝ 465,787 հազար դրամ) ընդհանուր գումարով ներառված են անհատներին տրված վարկերի մեջ:

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման գծով պահուստի համադրումը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների ներկայացվում է ստորև՝

	Բիզնես վարկեր	Վարկեր անհատ- ներին	Ընդամենը
Վարկերի արժեզրկումից պահուստ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	28,548	525,910	554,458
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից պահուստի զուտ ծախս	12,041	644,760	656,801
Նախկինում՝ որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	23,985	216,647	240,632
Դուրս գրված անհուսալի գումարներ	(5,826)	(411,114)	(416,940)
Վարկերի արժեզրկումից պահուստ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,748	976,203	1,034,951

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման գծով պահուստի համադրումը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների ներկայացվում է ստորև՝

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	Բիզնես վարկեր	Վարկեր անհատներին Ընդամենը	
Վարկերի արժեզրկումից պահուստ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	20,883	416,612	437,495
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից պահուստի գուտ (վերականգնում)/ծախս Նախկինում՝ որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	(25,207)	158,343	133,136
Դուրս գրված անհուսալի գումարներ	46,667	443,469	490,136
Դուրս գրված անհուսալի գումարներ	(13,795)	(492,514)	(506,309)
Վարկերի արժեզրկումից պահուստ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,548	525,910	554,458

Արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2019թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2019 թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Արժեզրկման կորուստների գծով պահուստ տարեսկզբի դրությամբ	234,664	189,286	130,508	554,458
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից պահուստի գուտ (վերականգնում)/ծախս Նախկինում՝ որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	(25,942)	265,118	417,625	656,801
Դուրս գրված անհուսալի գումարներ	-	-	240,632	240,632
Դուրս գրված անհուսալի գումարներ	-	-	(416,940)	(416,940)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	208,722	454,404	371,825	1,034,951

Արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2018թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2018 թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Արժեզրկման կորուստների գծով պահուստ տարեսկզբի դրությամբ	275,562	89,213	72,720	437,495
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից պահուստի գուտ (վերականգնում)/ծախս Նախկինում՝ որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	(40,898)	100,073	73,961	133,136
Դուրս գրված անհուսալի գումարներ	-	-	490,136	490,136
Դուրս գրված անհուսալի գումարներ	-	-	(506,309)	(506,309)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	234,664	189,286	130,508	554,458

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերը և դրանց արժեզրկումը ներկայացված են ստորև աղյուսակում՝

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի համար արժեզրկման պահուստ
Բիզնես վարկեր				
<i>Ոչ ժամկետանց</i>				
- մինչև 10,000 ՀՀ դրամ մեկ վարկառուի համար	2,680,714	34,328	2,646,386	1.28%
<i>Ժամկետանց</i>				
- մինչև 30 օր ժամկետանց	34,435	4,349	30,086	12.63%
- 30-ից 90 օր ժամկետանց	13,296	3,270	10,026	24.59%
- 91-ից 180 օր ժամկետանց	18,282	6,360	11,922	34.79%
- 181-ից 360 օր ժամկետանց	21,478	10,441	11,037	48.61%
Ընդամենը բիզնես վարկեր	2,768,205	58,748	2,709,457	2.12%

Վարկեր անհատներին				
<i>Ոչ ժամկետանց</i>				
- մինչև 10,000 ՀՀ դրամ մեկ վարկառուի համար	16,566,722	469,397	16,097,325	2.83%
- 10,000 ՀՀ դրամից ավել մեկ վարկառուի համար	74,024	244	73,780	0.33%
<i>Ժամկետանց</i>				
- մինչև 30 օր ժամկետանց	253,046	59,832	193,214	23.64%
- 30-ից 90 օր ժամկետանց	226,450	91,707	134,743	40.50%
- 91-ից 180 օր ժամկետանց	297,183	151,688	145,495	51.04%
- 181-ից 360 օր ժամկետանց	343,335	203,335	140,000	59.22%
Ընդամենը վարկեր անհատներին	17,760,760	976,203	16,784,557	5.50%
Ընդամենը վարկեր	20,528,965	1,034,951	19,494,014	5.04%

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերը և դրանց արժեզրկումը
ներկայացված են ստորև աղյուսակում

	Համախառն վարկեր	Արժեզրկման պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի համար արժեզրկման պահուստ
Բիզնես վարկեր				
<i>Ոչ ժամկետանց</i>				
- մինչև 10,000 ՀՀ դրամ մեկ վարկառուի համար	1,503,434	23,015	1,480,419	1.53%
<i>Ժամկետանց</i>				
- մինչև 30 օր ժամկետանց	6,656	936	5,720	14.06%
- 30-ից 90 օր ժամկետանց	6,023	1,498	4,525	24.87%
- 91-ից 180 օր ժամկետանց	1,639	534	1,105	32.57%
- 181-ից 360 օր ժամկետանց	5,843	2,565	3,278	43.90%
Ընդամենը բիզնես վարկեր	1,523,595	28,548	1,495,047	1.87%

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Վարկեր անհատներին				
<i>Ոչ ժամկետանց</i>				
- մինչև 10,000 ՀՀ դրամ մեկ վարկառուի համար	15,766,158	314,406	15,451,752	1.99%
- 10,000 ՀՀ դրամից ավել մեկ վարկառուի համար	85,685	548	85,137	0.64%
<i>Ժամկետանց</i>				
- մինչև 30 օր ժամկետանց	209,038	30,839	178,199	14.75%
- 30-ից 90 օր ժամկետանց	179,943	52,707	127,236	29.29%
- 91-ից 180 օր ժամկետանց	179,965	68,539	111,426	38.08%
- 181-ից 360 օր ժամկետանց	114,094	58,871	55,223	51.60%
Ընդամենը վարկեր անհատներին	16,534,883	525,910	16,008,973	3.18%
Ընդամենը վարկեր	18,058,478	554,458	17,504,020	3.07%

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված համախառն վարկերը և դրանց արժեզրկումը ըստ փուլերի ներկայացված են ստորև աղյուսակում՝

	2019 թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Բիզնես վարկեր				
Համախառն վարկեր Արժեզրկում	2,637,222 (19,611)	91,223 (22,335)	39,760 (16,802)	2,768,205 (58,748)
Չուտ բիզնես վարկեր	2,617,611	68,888	22,958	2,709,457
Վարկեր անհատներին				
Համախառն վարկեր Արժեզրկում	15,950,010 (189,111)	1,170,232 (432,069)	640,518 (355,023)	17,760,760 (976,203)
Չուտ վարկեր անհատներին	15,760,899	738,163	285,495	16,784,557
Ընդամենը հաճախորդներին տրվող վարկեր	18,378,510	807,051	308,453	19,494,014

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված համախառն վարկերը և դրանց արժեզրկումը ըստ փուլերի ներկայացված են ստորև աղյուսակում՝

	2018 թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Բիզնես վարկեր				
Համախառն վարկեր Արժեզրկում	1,477,331 (17,637)	38,782 (7,812)	7,482 (3,099)	1,523,595 (28,548)
Չուտ բիզնես վարկեր	1,459,694	30,970	4,383	1,495,047
Վարկեր անհատներին				
Համախառն վարկեր Արժեզրկում	15,584,070 (217,026)	656,754 (181,474)	294,059 (127,410)	16,534,883 (525,910)
Չուտ վարկեր անհատներին	15,367,044	475,280	166,649	16,008,973
Ընդամենը հաճախորդներին տրվող վարկեր	16,826,738	506,250	171,032	17,504,020

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

2019թ. հաճախորդների տրամադրված վարկերի փուլային շարժը համախառն արժեքով`

	2019թ. հունվարի 1	Տրամադրում	Մարում/ Դուրսգրում/ Վերականգ- նում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	2019թ. դեկտեմբերի 31
Փուլ 1	17,061,401	14,578,988	(11,953,134)	-	(644,499)	(455,524)	18,587,232
Փուլ 2	695,536	553,430	(557,197)	644,499	-	(74,813)	1,261,455
Փուլ 3	301,541	134,625	(286,225)	455,524	74,813	-	680,278
Ընդամենը	18,058,478	15,267,043	(12,796,556)	1,100,023	(569,686)	(530,337)	20,528,965

2018թ. հաճախորդների տրամադրված վարկերի փուլային շարժը համախառն արժեքով`

	2018թ. հունվարի 1	Տրամադրում	Մարում/ Դուրսգրում/ Վերականգ- նում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	2018թ. դեկտեմբերի 31
Փուլ 1	17,067,373	13,232,560	(12,743,168)	-	(301,130)	(194,234)	17,061,401
Փուլ 2	279,674	372,394	(250,763)	301,130	-	(6,899)	695,536
Փուլ 3	160,671	99,741	(160,004)	194,234	6,899	-	301,541
Ընդամենը	17,507,718	13,704,695	(13,153,935)	495,364	(294,231)	(201,133)	18,058,478

2019թ. հաճախորդների տրամադրված վարկերի փուլային շարժը (ԱՎԿ)`

	2019թ. հունվարի 1	Տրամադրում	Մարում/ Դուրսգրում/ Վերականգնում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	2019թ. դեկտեմբերի 31
Փուլ 1	234,664	166,081	289,301	-	(232,121)	(249,203)	208,722
Փուլ 2	189,286	200,612	(127,343)	232,121	-	(40,272)	454,404
Փուլ 3	130,508	73,958	(122,116)	249,203	40,272	-	371,825
Ընդամենը	554,458	440,651	39,842	481,324	(191,849)	(289,475)	1,034,951

2018թ. հաճախորդների տրամադրված վարկերի փուլային շարժը (ԱՎԿ)`

	2018թ. հունվարի 1	Տրամադրում	Մարում/ Դուրսգրում/ Վերականգնում	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	2018թ. դեկտեմբերի 31
Փուլ 1	275,562	183,556	(58,400)	-	(81,551)	(84,503)	234,664
Փուլ 2	89,213	101,948	(80,405)	81,551	-	(3,021)	189,286
Փուլ 3	72,719	42,698	(72,433)	84,503	3,021	-	130,508
Ընդամենը	437,494	328,202	(211,238)	166,054	(78,530)	(87,524)	554,458

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի հաշվեկշռային արժեքը, առանց արժեզրկման, ըստ գրավի տեսակների ներկայացված է ստորև`

	Բիզնես վարկեր	Վարկեր անհատներին	Ընդամենը
Այլ կողմերի երաշխավորած վարկեր	2,753,481	16,930,539	19,684,020
Անշարժ գույքով ապահովված վարկեր	12,588	-	12,588
Առանց գրավի կամ վարկի այլ ապահովության	2,136	830,221	832,357
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	2,768,205	17,760,760	20,528,965

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի հաշվեկշռային արժեքը, առանց արժեզրկման, ըստ գրավի տեսակների ներկայացված է ստորև`

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	Բիզնես վարկեր	Վարկեր անհատներին	Ընդամենը
Այլ կողմերի երաշխավորած վարկեր	1,482,070	15,994,418	17,476,488
Մնշարժ գույքով ապահովված վարկեր	22,996	-	22,996
Առանց գրավի կամ վարկի այլ ապահովության	18,529	540,465	558,994
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	1,523,595	16,534,883	18,058,478

Վերոնշյալ բացահայտումը ներկայացնում է տրված վարկերի հաշվեկշռային արժեքի և գրավի համեմատական նվազագույնը: Վարկերի հաշվեկշռային արժեքը հաշվարկվել է՝ հաշվի առնելով գրավի առարկայի իրացվելիությունը: Փոքր և միջին վարկերը ապահովված են Ընկերության կողմից վարկեր ստանալու նպատակով ձևավորված փոխառուների խմբի անդամների կողմից տրված անհատական երաշխիքներով: Վարկային պորտֆելի ժամկետայնությունը ներկայացված է ծան. 21-ում, որտեղ նշված են հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրային մարման ժամկետը մնացող ժամանակահատվածը:

2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների ընթացքում Ընկերությունը ձեռք չի բերել որևէ ակտիվ՝ գրավի առարկա հանդիսացող գույքի առգրավման միջոցով:

Հաճախորդներին տրվող վարկերը առաջնահերթ կարգով տրամադրվել են Հայաստանի Հանրապետությունում՝ հետևյալ տնտեսական ոլորտներում գործունեություն ծավալող հաճախորդներին:

	2019 թ. դեկտեմբերի 31		2018 թ. դեկտեմբերի 31	
	Գումար	%	Գումար	%
Գյուղատնտեսություն	12,443,137	61	11,318,982	63
Սպառողական և անձնակազմին տրվող վարկեր	3,928,138	19	2,307,365	13
Առևտուր	3,271,122	16	3,597,081	20
Մանրի արդյունաբերություն	113,265	1	118,508	1
Թեթև արդյունաբերություն	61,938	0	60,210	0
Այլ	711,365	3	656,332	3
Ընդամենը հաճախորդներին տրվող վարկեր, մինչև արժեզրկումը	20,528,965	100	18,058,478	100

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)

7. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵՂՔԵՐ ԱՍՈՐՏԻՉԱՑՎԱԾ ԱՐԺԵՐՈՎ

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	612,261	1,404,332
<i>Նվազեցում՝ արժեքկման գծով պահուստ</i>	<i>(1,890)</i>	<i>(6,739)</i>
	610,371	1,397,593

Արժեքկման կորուստների գծով պահուստների համադրումը ըստ փուլերի 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է՝

	2019թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Արժեքկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	6,739	6,739
Տարվա վերականգնում	(4,849)	(4,849)
Արժեքկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,890	1,890

Արժեքկման կորուստների գծով պահուստների համադրումը ըստ փուլերի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է՝

	2018 թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Արժեքկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ \$ՀՄՍ 9 համաձայն	3,031	3,031
Տարվա ծախս	3,708	3,708
Արժեքկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,739	6,739

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային արժեթղթերի համախառն գումարները և դրանց արժեքկումը ըստ փուլերի ներկայացված են ստորև աղյուսակում՝

	Փուլ 1	Ընդամենը
ՀՀ պետական պարտատոմսեր Արժեքկում	612,261 (1,890)	612,261 (1,890)
Ընդամենը ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	610,371	610,371

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային արժեթղթերի համախառն գումարները և դրանց արժեքկումը ըստ փուլերի ներկայացված են ստորև աղյուսակում՝

	Փուլ 1	Ընդամենը
ՀՀ պետական պարտատոմսեր Արժեքկում	1,404,332 (6,739)	1,404,332 (6,739)
Ընդամենը ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	1,397,593	1,397,593

Ներդրումային արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ պետական պարտատոմսեր: 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս ակտիվներից ոչ մի ակտիվ գրավադրված չի եղել: Ընկերության պարտավորությունների մասով (2018 թ. դեկտեմբերի 31՝ զրո): Պետական պարտքային արժեթղթերի տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույքը

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

տատանվում է 8%-ի և 10%-ի միջակայքում (2018 թ.՝ տարեկան 8 – 10%) և որն ուժի մեջ է 2020 – 2023 թթ. (2018 թ.՝ 2019 – 2023 թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է օգտագործելով գնահատման տեխնիկաներ՝ կիրառելով տվյալ պահին գործող տոկոսադրույթները գեղջված ապագա դրամական հոսքերի նկատմամբ: Տե՛ս ծան. 24:

8. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՂ ԼՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	Շենքեր	Փոխադրամիջոցներ	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Գրասենյակային գույք	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	487,049	114,963	239,084	77,850	110,151	76,402	1,105,499
Ավելացումներ	-	-	2,860	1,815	5,535	1,386	11,596
Օտարումներ	-	-	(2,859)	(1,030)	-	(1,553)	(5,442)
2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	487,049	114,963	239,085	78,635	115,686	76,235	1,111,653
Ավելացումներ	-	28,875	120,039	23,566	6,788	16,686	195,954
Օտարումներ	-	-	(12,544)	(3,374)	-	(3,675)	(19,593)
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	487,049	143,838	346,580	98,827	122,474	89,246	1,288,014
Մաշվածություն և ամորտիզացիա							
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	(157,164)	(57,577)	(178,609)	(61,278)	(100,807)	(34,128)	(589,563)
Մաշվածություն և ամորտիզացիա	(23,370)	(13,772)	(19,504)	(4,135)	(5,529)	(6,656)	(72,966)
Օտարումներ	-	-	2,859	1,030	-	1,433	5,322
2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(180,534)	(71,349)	(195,254)	(64,383)	(106,336)	(39,351)	(657,207)
Մաշվածություն և ամորտիզացիա	(24,361)	(14,085)	(25,740)	(4,614)	(5,202)	(6,886)	(80,888)
Օտարումներ	-	-	12,544	3,370	-	3,436	19,350
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(204,895)	(85,434)	(208,450)	(65,627)	(111,538)	(42,801)	(718,745)
Հաշվեկշռային արժեք							
2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	329,885	57,386	60,475	16,572	9,344	42,274	515,936
2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	306,515	43,614	43,831	14,252	9,350	36,884	454,446
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	282,154	58,404	138,130	33,200	10,936	46,445	569,269

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների ընդհանուր արժեքը կազմում է 249,856 հազար դրամ (2018 թ.՝ 207,404 հազար դրամ):

9. ԱԿՏԻՎԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Ակտիվի օգտագործման իրավունքը վերաբերում է Ընկերության կողմից վարձակալված գրասենյակային տարածքներին:

Սկզբնական արժեք	Շինություններ
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	412,272
Ավելացումներ	55,732
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	468,004
Կուտակված մաշվածություն	
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Մաշվածության ծախս	67,279
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	67,279
Հաշվեկշռային արժեք	
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	412,272
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	400,725

10. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր, համախառն	9,992	8,676
Արժեզրկման կորուստի գծով պահուստ	(27)	(73)
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ		
Ապագա ժամանակաշրջանների ծախսեր	173,389	174,428
Կանխավճարներ	10,142	27,732
Պաշարներ	9,219	10,934
Բռնագանձված ակտիվներ	5,104	5,455
Ընդամենը այլ ակտիվներ	207,819	227,152

Ընկերությունը անձնակազմին տրամադրում է վարկեր շուկայականից ցածր տոկոսադրույթով: Ընկերության անձնակազմին 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով տրամադրված վարկերի հաշվապահական հաշվառման համար վարկերը գեղջվել են 20%-ով, ինչն ըստ Ընկերության ղեկավարության՝ շուկայական դրույթաչափին է՝ հաշվի առնելով հնարավոր վարկային ռիսկերը:

Հետագա ժամանակաշրջանների ծախսերը ներկայացնում են անձնակազմին շուկայականից ցածր տոկոսադրույթով տրված վարկերի ազդեցությունը, որոնք հետաձգվել են եվ ճանաչվում են հանահունչ այն ժամանակաշրջաններում, որի ընթացքում աշխատողները ծառայություններ են մատուցում Ընկերությանը:

Արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2019թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2019 թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ	73	-	-	73
Տարվա զուտ ծախս/(վերականգնում)	(46)	-	107	61
Դուրս գրված անհուսալի գումարներ	-	-	(107)	(107)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9	27	-	-	27

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Արժեզրկման կորուստների գծով պահուստների համադրումը 2018թ. դրությամբ ըստ փուլերի ներկայացվում է ստորև՝

	2018 թ.			Ընդամենը
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	
Արժեզրկման կորուստների գծով պահուստ հունվարի 1-ի դրությամբ \$ՀՄՍ 9 համաձայն	37	21	950	1,008
Տարվա զուտ ծախս/(վերականգնում) Նախկինում որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	36	(21)	(13,678)	(13,663)
Դուրս գրված անհուսալի գումարներ	-	-	17,750	17,750
	-	-	(5,022)	(5,022)
Արժեզրկման կորուստների գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն \$ՀՄՍ 9	73	-	-	73

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքերի համախառն գումարները և դրանց արժեզրկումը ըստ փուլերի, \$ՀՄՍ 9-ի համաձայն, ներկայացված են ստորև աղյուսակում՝

	2019 թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Համախառն գումար Արժեզրկում	9,992 (27)	9,992 (27)
Չուտ դեբիտորական պարտքեր	9,965	9,965

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքերի համախառն գումարները և դրանց արժեզրկումը ըստ փուլերի, \$ՀՄՍ 9-ի համաձայն, ներկայացված են ստորև աղյուսակում՝

	2018 թ.	
	Փուլ 1	Ընդամենը
Համախառն գումար Արժեզրկում	8,676 (73)	8,676 (73)
Չուտ դեբիտորական պարտքեր	8,603	8,603

11. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Ոչ ընթացիկ		
Գրավով չապահովված վարկ բաժնետիրոջից	2,011,239	-
Ընթացիկ		
Գրավով չապահովված վարկ բաժնետիրոջից	93,682	2,151,066
Ընդամենը վարկեր և փոխառություններ	2,104,921	2,151,066

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Ստորև ներկայացվում են գործող վարկերի պայմանները.

	Արժույթ	Անվան ական տոկոսա դրույթ	Մարման տարի	2019 թ. դեկտեմբերի 31		2018 թ. դեկտեմբերի 31	
				Իրական արժեք	Հաշվեկշռ. արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով չապահովված վարկ բաժնետիրոջից	ՀՀ դրամ	10.00%	2022	2,074,196	2,104,921	2,186,336	2,151,066

12. ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերությունը իր գործող մասնաճյուղերի համար վարձակալել է մի քանի շինություններ:
Վարձակալության գործարքից բխող փոփոխությունները ներկայացված են ստորև.

2019թ.	Հունվարի 1, 2019		Վարձակալու- թյան վճարում տարվա ընթացքում	Նոր վարձակալու- թյուն տարվա ընթացքում	Դեկտեմբերի 31, 2019
	Վարձակալության պարտավորությունների ճանաչում	Տոկոսների հաշվեգրում տարվա ընթացքում			
	402,044	51,541	85,573	52,399	420,411

Ֆինանսական վարձակալության պարտավորություն`

Ժամկետայնության վերլուծություն	2019թ.
1-ին տարի	100,534
2-րդ տարի	103,725
3-րդ տարի	94,891
4-րդ տարի	82,399
5-րդ տարի	74,155
Յետագա	152,014
	607,718
Նվազեցում` չվաստակած տոկոսային եկամուտ	187,307
	420,411
Վերլուծված`	
Ոչ ընթացիկ, չգեղջված	507,184
Ընթացիկ, չգեղջված	100,534
	607,718

13. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Ծառայությունների և ապրանքների գծով վճարման ենթակա գումարներ	15,890	21,612
Վարձակալության գծով վճարման ենթակա գումարներ	793	962
Այլ	1,154	880
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Վճարման ենթակա պարզևավճարներ	75,050	118,149
Արձակուրդի պահուստ	56,866	44,281
Շահութահարկից բացի այլ հարկային պարտավորություններ	26,172	33,358
Այլ	-	817
Ընդամենը այլ պարտավորություններ	175,925	220,059

«ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԻ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

14. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՄ

Ստորև աղյուսակում ներկայացված են ֆինանսական գործունեությունից առաջացած ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ դրամական և ոչ դրամական փոփոխությունները: Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորություններ են հանդիսանում այնպիսի պարտավորություններ, որոնց գծով դրամական հոսքերը դասակարգվել են կամ դասակարգվելու են ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որպես ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

	2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	Տոկոսային վճար	Տոկոսային ծախս	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկ բաժնետերից	2,151,066	(300,883)	254,738	2,104,921
	2,151,066	(300,883)	254,738	2,104,921

Վարձակալական պարտավորությունների համադրումը ներկայացված է ծան. 12-ում:

15. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 100,000 բաժնետոմս (2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 100,000 բաժնետոմս): Թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 17,225 սովորական բաժնետոմսերից (2018 թ. դեկտեմբերի 31՝ 17,225 բաժնետոմս)՝ մեկ բաժնետոմսը 200,000 դրամ անվանական արժեքով (2018 թ. դեկտեմբերի 31՝ 200,000 դրամ/բաժնետոմս), որոնց ընդհանուր գումարը կազմում է 3,445,000 հազար դրամ (2018 թ. դեկտեմբերի 31՝ 3,445,000 հազար դրամ): 2019 թ. ընթացքում սովորական բաժնետոմսեր չեն թողարկվել (2018 թ.՝ 0):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարագրված շահաբաժինները և քվեարկել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս-մեկ ձայն սկզբունքով: 2019 թ. ընթացքում ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ հայտարարել է 644,085 հազար դրամի շահաբաժին (2018 թ.՝ 565,579 հազար դրամ):

	2019 թ.	2018 թ.
Վճարվելիք շահաբաժիններ հունվարի 1-ի դրությամբ	339,347	200,282
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժիններ	644,085	565,579
Տարվա ընթացքում վճարված շահաբաժիններ	(596,982)	(426,514)
Վճարվելիք շահաբաժիններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	386,450	339,347
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժինները մեկ բաժնետոմսի դիմաց	37.4	32.8

Բոլոր շահաբաժինները հայտարարագրվել և վճարվել են ՀՀ դրամով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերի միջև բաշխվող պահուստները սահմանափակված են իր կուտակված չբաշխված շահույթով, որոնք ներկայացված են տեղական հաշիվներում: Չբաշխվող պահուստները ներկայացվում են պահուստավորման ֆոնդով, որը ստեղծվում է օրենսդրության պահանջով: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պահուստային ֆոնդը ձևավորվում է պարտադիր տարեկան հատկացումների միջոցով՝ հաշվարկված ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ զուտ շահույթի 5%-ի չափով, մինչև ֆոնդը կազմի բաժնետիրական կապիտալի 15%-ը: Պահուստի այս գումարը կարող է օգտագործվել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ կորուստները ծածկելու, ինչպես նաև ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

«ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԻ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)

16. ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ և ԾԱԽՍ

	2019 թ.	2018 թ.
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրվող վարկեր	4,939,935	4,969,301
Ժամկետային ավանդներ	265,437	211,597
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	59,925	97,278
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,930	18,511
Ընդամենը տոկոսային եկամուտ	5,283,227	5,296,687
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	(254,738)	(301,173)
Հետզնման պայմանագրեր	(51,541)	-
Ընդամենը տոկոսային ծախս	(306,279)	(301,173)
Չուտ տոկոսային եկամուտ	4,976,948	4,995,514

17. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

	2019 թ.	2018 թ.
Տույժեր և տուգանքներ	151,715	191,223
Այլ	14,278	5,183
Ընդամենը գործառնական եկամուտ	165,993	196,406

18. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ

	2019 թ.	2018 թ.
Աշխատակիցների հատուցում	1,032,639	1,065,809
Հատուցում շուկայականից ցածր տոկոսադրույքներով անձնակազմին տրվող վարկերից	40,263	49,617
Առողջության ապահովագրություն	26,702	27,100
Այլ հատուցումներ	24,876	22,744
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	1,124,480	1,165,270

Անվանական տոկոսային ծախսի և շուկայական տոկոսային ծախսի միջև առկա տարբերության հիման վրա հաշվարկված աշխատողների հատուցումների ճանաչումը համապատասխան ժամանակաշրջանում ներառված է աշխատողների փոխհատուցումներ հոդվածում, տես ծան. 10 Ապագա ժամանակաշրջանների ծախսեր:

19. ՎԱՐՉԱԿԱՆ և ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2019 թ.	2018 թ.
Մաշվածություն և ամորտիզացիա	148,167	72,966
Անվտանգություն	85,363	83,759
Խորհրդի ծախսեր	64,892	61,987
Հարկեր, բացի շահութահարկից	64,182	61,684
Գործառնական վարձակալության ծախսեր	57,308	147,363
Վերանորոգում և սպասարկում	51,616	49,069
Վարկերի տրամադրման և հավաքագրման մասով ծախսեր	45,084	45,434
Հաղորդակցության և տեղեկատվության ծառայություններ	36,768	34,686
Պարտադիր վճարներ	36,051	37,276
Մասնագիտական ծախսեր	23,310	25,872
Գովազդ և մարքեթինգ	18,977	11,883
Գործուղման ծախսեր	17,212	15,889
Գրասենյակային պարագաներ	10,750	9,293
Անձնակազմի վերապատրաստման ծախսեր	2,686	2,862
Ապահովագրություն	1,381	1,425
Այլ գործառնական ծախսեր	18,040	11,184
Ընդամենը վարչական և այլ գործառնական ծախսեր	681,787	672,632

«ԱՐԵԳԱԿ» ՈՒՆԻՎԵՐՍԱԿ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱՅՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

20. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները

Շահութահարկի գծով ծախսն իր մեջ ներառում է՝

	2019 թ.	2018 թ.
Ընթացիկ հարկային ծախսեր	548,960	679,536
Հետաձգված հարկային օգուտ	(10,861)	(29,854)
Շահութահարկի գծով ծախսեր տարվա համար	538,099	649,682

(բ) Շահույթի կամ վնասի՝ բազմապատկած կիրառելի հարկադրույթով և շահութահարկի գծով ծախսի համադրում

Ընկերության 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա շահույթի նկատմամբ կիրառելի շահութահարկի դրույթն է 20% (2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված՝ 20%): Հարկերի գծով ակնկալվող և իրական ծախսի համադրումը ներկայացված է ստորև.

	2019 թ.	2018 թ.
Շահույթ մինչև հարկումը	2,702,103	3,226,021
Հարկում օրենքով սահմանված դրույթաչափով	(540,421)	(645,204)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը՝		
- Չնվազեցվող ծախսեր	(14,621)	(11,664)
- Չհարկվող եկամուտ	5,077	7,186
Շահութահարկի դրույթաչափի փոփոխության ազդեցությունը	11,866	-
Տարվա շահութահարկի ծախս	(538,099)	(649,682)

2019 թ. արդյունավետ հարկի դրույթաչափն է 19.91% (2018 թ.՝ 20.14%) :

(գ) Հետաձգված հարկերի վերլուծություն՝ ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ և ՀՀ հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման բազաների միջև: Այդ ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային ազդեցությունը մանրամասն ներկայացված է ստորև և գրանցված է 18% (2018: 20%) դրույթաչափով ելնելով օրենսդրական փոփոխություններից նվազեցնելով շահութահարկի դրույթաչափը 18% նախկինում գործող 20%-ից:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	ճանաչված (ծախս)/ օգուտ շահույթում կամ վնասում	Շահութահարկի դրույթաչափի փոփոխության ազդեցությունը	2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ժամանակավոր տարբերությունների հարկային ազդեցությունը				
Հաճախորդներին տրված վարկեր	(152,249)	6,733	14,552	(130,964)
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	1,348	(970)	(38)	340
Ժամկետային ավանդներ	(1,323)	(3,234)	456	(4,101)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	96	(992)	90	(806)
Այլ ակտիվներ	-	3,432	(343)	3,089
Այլ պարտավորություններ	34,485	(5,974)	(2,851)	25,660
Շահութահարկի հետաձգված պարտավորություններ	(117,643)	(1,005)	11,866	(106,782)

2018թ. ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային ազդեցությունը մանրամասն ներկայացված է ստորև և գրանցված է 20% դրույթաչափով:

	2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	Հաշվ. հաշվառ. քաղ. փոփոխ. ազդեցությունը ՖՀՄՍ 9 կիրառման մասով	(Ծախս)/ օգուտ շահույթում կամ վնասում	2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ժամանակավոր տարբերությունների հարկային ազդեցությունը				
Հաճախորդներին տրված վարկեր	(169,751)	2,846	14,656	(152,249)
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	(5,950)	6,556	742	1,348
Ժամկետային ավանդներ	(5,133)	5,611	(1,801)	(1,323)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	278	(182)	96
Այլ ակտիվներ	-	202	(202)	-
Այլ պարտավորություններ	17,844	-	16,641	34,485
Շահութահարկի հետաձգված պարտավորություններ	(162,990)	15,493	29,854	(117,643)

21. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության ռիսկերի կառավարման գործառույթն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի նկատմամբ: Ֆինանսական ռիսկերը կազմված են շուկայական (ներառյալ արտարժույթային, տոկոսադրույթի ռիսկ և այլ գնային ռիսկը), վարկային և իրացվելության ռիսկերից: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է սահմանել ռիսկերի սահմանաչափերը և այնուհետ ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթների նպատակն է ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի, ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տարեվերջից ի վեր ռիսկի կառավարման ընթացակարգերում փոփոխություններ տեղի չեն ունեցել, բացառությամբ ՖՀՄՍ 9-ի ընդունման հետ կապված փոփոխությունների գծով ռիսկերի:

Տնօրենների խորհուրդն, ընդհանուր առմամբ, պատասխանատու է ռիսկի կառավարման համակարգի և հիմնական ռիսկերի կառավարման վերահսկման, իր ռիսկերի կառավարման քաղաքականությունների և ընթացակարգերի ուսումնասիրման, ինչպես նաև առանձնակի խոշոր չափերի բացահայտումների հաստատման համար:

Դեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում գործունեության իրականացման ապահովման համար: Ռիսկերի կառավարիչը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար. նա վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, գնահատման և գեկուցման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Նա հաշվետու է Տնօրենների խորհրդին՝ ռիսկերի կառավարման/աուդիտի հանձնաժողովի միջոցով:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե՛ պորտֆելի և թե՛ գործարքային մակարդակում կառավարվում և վերահսկվում են վարկային կոմիտեների, գործառնական վարչության ղեկավարի և ֆինանսական տնօրենի կողմից: Որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ղեկավարությունը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված վարկի տեսակից և գումարներից:

Ռիսկի թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները բացահայտվում և կառավարվում են Ընկերության բոլոր մակարդակներում: Հատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ընթացիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների հավաստիացման մակարդակի որոշմանը: Շուկայական և վարկային ռիսկի ստանդարտ վերլուծությունից բացի, ռիսկերի կառավարիչը մոնիտորինգ է իրականացնում ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի նկատմամբ՝ պարբերաբար ժողովներ անցկացնելով գործառնական և այլ ստորաբաժանումների և համապատասխան անձնակազմի հետ՝ վերջիններիս փորձառության ոլորտի վերաբերյալ փորձագիտական կարծիք ստանալու համար:

Վարկային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է վարկային ռիսկի: Վարկային ռիսկն այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին պարտավորությունները չկատարելու հետևանքով: Վարկային ռիսկն առաջանում է Ընկերության կողմից վարկավորման և այլ գործարքներ իրականացնելու արդյունքում, որը բերում է ֆինանսական ակտիվների աճի:

Ընկերության առավելագույն ենթարկվածությունը վարկային ռիսկին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում: Ընկերությունը կառավարում է իր վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև տնտեսության ճյուղերի և աշխարհագրական հատվածների գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար:

Վարկային ռիսկի սահմանաչափերը, ըստ վարկատեսակների և տնտեսության ճյուղերի, պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ մոնիտորինգի են ենթարկվում և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկին (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորությունների համար), ներառյալ պորտֆելի կենտրոնացման սահմանափակվանը վերաբերող ցուցումները և վարկային կոմիտեի ստեղծումը, որն ակտիվորեն մոնիտորինգ է

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

իրականացնում վարկային ռիսկի նկատմամբ: Վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Տնօրենների խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- Վարկային դիմում-հայտերի դիտարկման և հաստատման ընթացակարգերը
- Վարկառուների (իրավաբանական և անհատ) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը
- Պայմանագրային կողմերի վճարունակության գնահատման մեթոդաբանությունը
- Գրավի գնահատման մեթոդաբանությունը
- Վարկային փաստաթղթերի պահանջները
- Վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական մոնիտորինգի ընթացակարգերը:

Ընկերության գործառնական վարչությունը հետևում է ժամկետանց վարկերի մնացորդներին, այդ իսկ պատճառով Դեկավարությունը պատշաճ է համարում տեղեկատվություն տրամադրել վարկային ռիսկի ժամկետայնության և այլ գործոնների վերաբերյալ, ինչպես բացահայտված է ծան. 6-ում:

Գրավի և պարտքի ապահովման այլ միջոցներ. վարկային ռիսկը գնահատվում և կառավարվում է նաև ձեռք բերելով, վերահսկելով և մոնիտորինգի ենթարկելով գրավը, որը կարող է ներկայացված լինել գույքի նկատմամբ սեփականության իրավունքով, արժեթղթերի և այլ միջոցների գրավադրմամբ, ներառյալ անձնական երաշխավորությունները, ինչպես բացահայտված է ծան. 6-ում:

Թեպետ գրավը կարևոր մեղմացնող գործոն է վարկային ռիսկը գնահատելիս, սակայն Ընկերության քաղաքականությունն է՝ վարկերը տրամադրել հաշվի առնելով հաճախորդի վարկունակությունը, այլ ոչ թե բացառապես վարկի ապահովման միջոց տրամադրելու կարողությունը: Գրավը համարվում է հետվճարման երկրորդական աղբյուր: Սահմանափակ դեպքերում, ելնելով հաճախորդի դիրքից, կամ գումարների տեսակից, գրավով ապահովում կարող է և չլինել:

Ընկերության կողմից ընդունվող գրավի հիմնական տեսակներն են.

- Բնակելի անշարժ գույք
- Այլ գրավ
- Անհատական երաշխավորություններ

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պարտապաններ, կամ կապակցված պարտապանների ընկերություններ (2018 թ. դեկտեմբերի 31 դրությամբ՝ զրո), որոնց հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է առավելագույն վարկային ռիսկի 10%-ը:

Կիրառվող վարկային ռիսկի չափման մեթոդաբանությունը

Վարկային ռիսկը չափելիս Ընկերությունը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԿ) մեթոդաբանությունը: Ակնկալվող կորուստը սահմանվում է որպես հավանականության վրա հիմնված ակնկալվող արժեք: Այն ներառում է գեղչված հիմունքով մայր գումարի և տոկոսագումարի գծով կորուստներ: Կանխատեսված կորուստները գնահատելիս Ընկերությունն օգտագործում է ողջամիտ և հիմնավորված արտաքին և ներքին աղբյուրներից ստացված տեղեկություններ, այն թվում տեղեկություններ նախկին իրադարձությունների, ներկա վիճակի վերաբերյալ և ապագա իրադարձությունների և տնտեսական իրավիճակի մասին կանխատեսումներ:

Ակնկալվող վարկային կորուստների մոդելը սահմանում է փուլ 3-ի արժեզրկման մոդել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, արդյոք սկզբնական ճանաչումից ի վեր տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի վարկային ռիսկի նշանակալի աճ: Այս երեք փուլերը սահմանում են, որ արժեզրկման գումարը պետք է ճանաչվի որպես ակնկալվող վարկային կորուստ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Վարկային ռիսկի նշանակալի աճ

Ընկերությունը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը:

Ֆինանսական գործիքի՝ դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման ժամանակ Ընկերությունը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ են և հիմնավորված:

Երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Ընկերությունը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել:

Վարկառուի վարկային վարկանիշի զգալի վատթարացումը, արտաքին պայանների արդյունքում բիզնեսին պատճառած վնասները, աշխատանքի կորուստը կարող են համարվել վարկային ռիսկերի զգալի չափով ավելացման որակական ցուցանիշեր, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը զգալիորեն բարձր է էականորեն նշանակալի շեմից:

Ընկերությունը գնահատում է վարկային ռիսկի զգալի աճը անհատական հիմունքով: Գնահատման արդյունքում ֆինանսական ակտիվների պորտֆելը բաշխվում է հետևյալ կերպ՝

1. 'Փուլ 1' - Սկզբնական ճանաչման պահին վարկային տեսանկյունից չարժեզրկված ֆինանսական ակտիվներ, որի վարկային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Ընկերության կողմից:
2. 'Փուլ 2' - ֆինանսական ակտիվներ, որոնք արձանագրում են վարկային ռիսկի զգալի աճ (SICR) սկզբնական ճանաչումից հետո, սակայն դեռևս չեն համարվում վարկային տեսանկյունից արժեզրկված:
3. 'Փուլ 3' - վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Լիարժեք ԱՎԿ-ի դեպքում ֆինանսական ակտիվների համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական ակտիվների վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո (փուլ 2 և 3): Բոլոր այլ ֆինանսական ակտիվների դեպքում ԱՎԿ-ները չափվում են 12-ամսյա ԱՎԿ-ին համարժեք գումարի չափով (փուլ 1):

Դեֆոլտի սահմանումը

ԱՎԿ-ի գումարը չափելիս կիրառվում է դեֆոլտի սահմանումը: Ստորև նշվածները Ընկերությունը համարում է դեֆոլտի իրադարձություն՝

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց որևէ վարկային պարտավորություն Ընկերության նկատմամբ;
- Վարկառուի՝ Ընկերության հանդեպ ունեցած պարտավորությունների ամբողջական վճարման հավանականությունը բացակայում է, վերջինիս պարտքերը դուրս գրված են, և վարկառուն սնանկ ճանաչվելու նպատակով դատական գործընթացում է գտնվում:

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման ժամանակ Ընկերությունը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Դեֆոլտի գնահատման համար Ընկերությունը օգտվում է տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից, որոնք պատրաստվում են կազմակերպության ներսում, կամ ստացվում արտաքին աղբյուրներից: Որակական ցուցանիշները, ինչպիսիք են վարկառուի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման մասին արտաքին աղբյուրից ստացված տեղեկությունները ծառայում են որպես վերլուծության կարևոր տվյալներ:

Հաճախորդներին տրված վարկեր

Ընկերությունը ակնկալվող վարկային կորուստները վարկային պորտֆելների համար չափում է հավաքական հիմունքով, որոնք համանման վարկային ռիսկի հատկանիշներ ունեն:

Այդպիսի հատկանիշներից են՝

- Սեզոնային
- Երաշխավորության տեսակները
- Չափը

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

- Ապահովվածությունը

ԱՎԿ-ի՝ հավաքական հիմունքով գնահատման ենթակա պորտֆելները բաժանվում են 5 սեգմենտների՝ սպառողական, բիզնես, խմբային, միկրո, անձնակազմին տրվող: Վարկային ռիսկի զգալի աճի, կամ արժեզրկումից կորստի բացահայտման նպատակով Ընկերությունը վերլուծում է վարկառուների իրացվելիության, վճարունակության, բիզնես գործունեության և ֆինանսական ռիսկերի առկայության, ժամկետանց, վերակազմակերպման մասին տեղեկատվությունը: Վարկային ռիսկի զգալի աճի բացահայտման նպատակով Ընկերության ակտիվները գնահատվում են անհատական հիմունքով, իսկ դրա ակնկալվող վարկային կորուստները չափվում են հավաքական հիմունքով:

(i) ԱՎԿ-ի չափումը

ԱՎԿ-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Դեֆոլտի հավանականություն (PD);
- Դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD);
- Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD).

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից: Դրանք կարգավորվում են կանխատեսումների արտացոլման նպատակով:

- ԴՅ մոդել

Յուրաքանչյուր խմբի համար ԴՅ-ի չափը որոշելու համար Ընկերությունն օգտագործում է միգրացիայի մատրիցների մեթոդաբանություն, որը կիրառում է պատմական տվյալների, պարտավորությունների չկատարման և դեֆոլտի փորձի վիճակագրական վերլուծությունները՝ վարկերի գումարը հուսալիորեն գնահատելու համար, որոնք, ի վերջո, կարժեզրկվեն՝ մինչև հաշվեկշռային ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում: Չամանման խմբի դիտարկման համար ընտրվել է հինգ տարվա ժամկետ: Դիտարկվող ժամանակահատվածում պատրաստվեցին մեկամսյա միգրացիայի մատրիցները:

Միգրացիայի մատրիցներն օգտագործվում են հավաքական հիմունքով գնահատման յուրաքանչյուր խմբի դեֆոլտի 12-ամսյա հավանականությունը հաշվարկելու համար: Դրանից ելնելով, հաշվարկվում են հետագա տարիների սահմանային ԴՅ-ները, մինչև սպառնալի պորտֆելի մարման ժամկետը: ԴՅ-ի հաշվարկների համար դեֆոլտ է սահմանվել 90 օր ժամկետանց դեպքը:

Ժամկետային (Point in Time PDs) ԴՅ-ները հաշվարկելու համար Ընկերությունը կիրառում է կանխատեսումներ:

Կանխատեսումների ներառում

ԱՎԿ-ի չափման ժամանակ Ընկերության օգտագործված տեղեկությունները ներառում են դրամավարկային քաղաքականություն սահմանող մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալները և կանխատեսվող տնտեսական ցուցանիշները: Դեֆոլտի հավանականության որոշմանը մասնակցում են հետևյալ մակրոտնտեսական փոփոխականները. ՀՆԱ, գործազրկության մակարդակը, սպառողական գների համաթիվը, ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքը և ՌԴ ռուբլի-ՀՀ դրամ փոխարժեքը: Դրանք հանգեցնում են դեֆոլտի տարբեր հավանականությունների: Այս տարբեր փոփոխականների համակողմանի վերլուծումը կամ կշռումը դեֆոլտի միջին կշռված հավանականության հիմքն է կազմում, որն օգտագործվում է ԱՎԿ-ի հաշվարկների համար: 12-ամսյա ԱՎԿ-ն (փուլ 1-ի վարկեր) չափվում է միայն 12 ամսվա ԴՅ-ով: Գործողության ամբողջ ընթացքի ԱՎԿ-ն (փուլ 2-ի և 3-ի վարկեր) չափվում է բոլոր տարեկան սահմանային ԴՅ-ներով՝ մինչև վարկի մարման ժամկետի ավարտը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն հրապարակվում են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՅ) կողմից:

- LGD մոդել

Արժեզրկման մոդելի բաղադրիչներից մեկը դեֆոլտի դեպքում կորստի չափն է, այսինքն՝ հաշվարկվում է դեֆոլտի դեպքում կորուստը: Ընկերությունն օգտագործում է LGD-ն հաշվարկելիս դեֆոլտում գտնվող բոլոր վարկերի համար դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տեղեկատվությունը: Դրամական հոսքերի մասին ողջ տեղեկատվությունը (մայր գումար, տոկոսագումար, տույժեր) հավաքագրվում է

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

դեֆոլտի ամսաթվից հետո յուրաքանչյուր LGD խմբի համար: Բոլոր վերականգնումները հետագայում գեղջվում են մինչ դեֆոլտի կետ՝ օգտագործելով միջին արդյունավետ տոկոսադրույքը յուրաքանչյուր LGD խմբի համար:

- EAD model

EAD-ն դեֆոլտի դեպքում ակնկալվող ռիսկն է: Ընկերությունը EAD-ն ստանում է կոնտրագենտի համար ներկայացրած ընթացիկ/ներկա ռիսկից և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխություններից, որոնք նախատեսված են ամորտիզացիա ներառող պայմանագրով:

(ii) ԱՎԿ-ի հաշվարկ

Յուրաքանչյուր խմբի/սեգմենտի համար սահմանային ԴՅ-ն և LGD-ն որոշելուց հետո վարկային կորուստների գծով պահուստների վերջնական հաշվարկ է կատարվում: Այն կախված է խմբերի ռիսկի հատկանիշներից. փոլ 1-ի խմբերի համար (31-ից պակաս ժամկետանց օր) հաշվարկվում է 12-ամսյա ԱՎԿ-ն, իսկ փոլեր 2-ի և 3-ի խմբերի համար (ավելի քան 90 օր ժամկետանց կամ վերակազմակերպված վարկեր) հաշվարկվում է ամբողջական ԱՎԿ-ն: Վարկային պորտֆելի LLP-ի հաշվարկման արդյունքները հնարավորություն են տալիս ստանալ հավաքական հիմունքով գնահատման 5 խմբերից յուրաքանչյուրի արժեզրկման միջին դրույքաչափը: Այս դրույքաչափերը կիրառվում են մինչև ամբողջ մոդելի հաջորդ հերթական վերահաշվարկ կատարելը վարկային կորուստների գծով պահուստներ ձևավորելու համար: Արժեզրկման մոդելի վերահաշվարկը մեկ անգամ կատարվել է 2019 թվականին, իսկ վերջինը կատարվել է 2019 թվականի դեկտեմբերին՝ վերջին հասանելի տվյալների հիման վրա:

Այլ ֆինանսական ակտիվներ

Բանկերից ստացման ենթակա գումարները, ժամկետային ավանդները և պարտքային արժեթղթերում ներդրումները ենթակա են արժեզրկման՝ համաձայն 12-ամսյա ԱՎԿ-ի: Հաճախորդների մասով դեֆոլտի հավանականության և LGD-ի հաշվարկները ստացվում են միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, Fitch, S & P) տրամադրած վարկային վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունից:

Այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող վարկային կորուստների համար նախատեսված պահուստը հաշվարկվում է՝ կիրառելով նմանատիպ ակտիվների վարկային կորուստի դրույքարափը:

2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստների համադրումը ներկայացվում է ստորև՝

	Հաճախորդ- ներին տրված ակտիվներ	Ժամկե- տային ավանդներ	Ներդրու- մային արժեթղթ- եր ամորտի- զացված արժեքով	Դրամական միջոցներ և դրանց համարժեք ներ	Այլ ակտիվ ներ	Ընդա- մենը
Վարկային արժեզրկման գծով պահուստ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	554,458	28,488	6,739	1,230	73	590,988
Արժեզրկման պահուստի գուտ ծախս/(վերականգ- նում)	656,801	(19,904)	(4,849)	(999)	61	631,110
Նախկինում որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	240,632	-	-	-	-	240,632
Դուրս գրված անհուսալի գումարներ	(416,940)	-	-	-	(107)	(417,047)
Վարկային արժեզրկման գծով պահուստ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,034,951	8,584	1,890	231	27	1,045,683

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստների համադրումը ներկայացվում է ստորև՝

	Հաճախորդ- ների տրված ակտիվներ	Ժամկե- տային ավանդ- ներ	Ներդրումա- յին արժեթղթեր ամորտիզաց- ված արժեքով	Դրամական միջոցներ և դրանց համարժեք- ներ	Այլ ակտիվ- ներ	Ընդա- մենը
Վարկային արժեզրկման գծով պահուստ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ	423,263	-	-	-	-	423,263
ՖՀՄՍ 9 ընդունման արդյունքում հաշվապ. հաշվառ. քաղ. փոփոխ. ազդեցություն	14,232	28,056	3,031	1,390	1,008	47,717
Վարկային արժեզրկման գծով պահուստ 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9	437,495	28,056	3,031	1,390	1,008	470,980
Արժեզրկման պահուստի զուտ ծախս/(վերականգնում) Նախկինում որպես անհավաքագրելի դուրս գրված գումարների վերականգնում	133,136	432	3,708	(160)	(13,663)	123,453
Դուրս գրված անհուսալի գումարներ	490,136	-	-	-	17,750	507,886
	(506,309)	-	-	-	(5,022)	(511,331)
Վարկային արժեզրկման գծով պահուստ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	554,458	28,488	6,739	1,230	73	590,988

Վարկային ռիսկերի կենտրոնացում. վարկային ռիսկն ամենակարևոր ռիսկն է Ընկերության գործունեության համար, այդ պատճառով ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում այդ ռիսկի կառավարմանը: Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկավորման գործունեության հետ կապված, որը հանգեցնում է վարկերի ու փոխառությունների տրամադրմանը, ինչպես նաև ներդրումային գործունեության հետ կապված, որի արդյունքում Ընկերության ակտիվների պորտֆելը համալրվում պետական գանձապետական պարտատոմսերով: Վարկային ռիսկը կառավարվում և վերահսկվում է վարկային կոմիտեների և գործառնական ու ֆինանսական բաժինների ղեկավարների կողմից, իսկ վարկային ռիսկի վերաբերյալ հաշվետվությունները կանոնավոր կերպով ներկայացվում են ղեկավարությանը:

Վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն աստիճանը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Հաճախորդներին տրամադրված վարկերի գծով վարկային ռիսկերի կենտրոնացման վերաբերյալ տեղեկությունները նկարագրված են ծան. 6-ում:

Վարկային ռիսկի առավելագույն չափը. Ընկերության վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ու ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին՝ նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	470,766	325,354
Ժամկետային ավանդներ	3,199,145	3,230,269
Հաճախորդներին տրված վարկեր	19,494,014	17,504,020
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	610,371	1,397,593
Այլ ստացման ենթակա գումարներ	9,965	8,603
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	23,784,261	22,465,839

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են (ա) արտարժույթի, (բ) տոկոսադրույթի, և (գ) արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերին:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու հսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքի սահմանաչափեր տոկոսադրույթների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի հետ կապված, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են տնօրենների խորհրդի կողմից՝ ռիսկերի կառավարման հանձնաժողովի միջոցով:

Ի լրումն, Ընկերությունը կիրառում է սթրեսի սցենարներ՝ վարկային պորտֆելի և ընդհանուր ֆինանսական վիճակի վրա մի շարք առանձնահատուկ շուկայական սցենարների հնարավոր ֆինանսական ազդեցությունը մոդելավորելու համար:

Արժույթային ռիսկ. արժույթային ռիսկի մասով ղեկավարությունը սահմանում է սահմանաչափեր արժույթային և ընդհանուր ռիսկերի նկատմամբ, որոնք պարբերաբար վերահսկվում են:

Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածությունը:

	2019 թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	438,751	42,674	481,425
Ժամկետային ավանդներ	3,199,145	-	3,199,145
Հաճախորդներին տրված վարկեր	19,494,014	-	19,494,014
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	610,371	-	610,371
Այլ դեբիտորական պարտքեր	9,965	-	9,965
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	23,752,246	42,674	23,794,920
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Փոխառու միջոցներ	2,104,921	-	2,104,921
Վարձակալության պարտավորություններ	420,411	-	420,411
Այլ ֆինանսական պարտավորություններ	17,837	-	17,837
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,543,169	-	2,543,169
Հաշվեկշռային բաց դիրք	21,209,077	42,674	21,251,751

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2018 թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	328,704	6,714	335,418
Ժամկետային ավանդներ	3,230,269	-	3,230,269
Հաճախորդներին տրված վարկեր	17,504,020	-	17,504,020
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	1,397,593	-	1,397,593
Այլ դեբիտորական պարտքեր	8,603	-	8,603
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	22,469,189	6,714	22,475,903
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Փոխառու միջոցներ	2,151,066	-	2,151,066
Այլ ֆինանսական պարտավորություններ	23,454	-	23,454
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	2,174,520	-	2,174,520
Հաշվեկշռային բաց դիրք	20,294,669	6,714	20,301,383

Արտարժույթի ռիսկի զգայունություն. ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ընկերության զգայունությունը ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքի 20% աճի և նվազման հանդեպ: Տվյալ 20%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 20% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժեվորվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ 20%-ի չափով:

	2019 թ. դեկտեմբերի 31	2018 թ. դեկտեմբերի 31
Դրամի ուժեղացում- Շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի վրա ազդեցությունը	8,535	1,343
Դրամի թուլացում- Շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի վրա ազդեցությունը	(8,535)	(1,343)

Տոկոսադրույթի ռիսկ. շուկայական գերիշխող տոկոսադրույթների տատանումների հետևանքով Ընկերությունը ենթարկվում է ռիսկի, որն ազդեցություն ունի Ընկերության դրամական հոսքերի և ֆինանսական վիճակի վրա: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույթների անսպասելի փոփոխության դեպքում: Դեկավարությունը պարբերաբար վերահսկում և սահմանաչափեր է սահմանում տոկոսադրույթի վերանայման ժամկետների անհամապատասխանության մակարդակի նկատմամբ:

Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է Ընկերության ենթարկվածությունը տոկոսադրույթի ռիսկերին: Աղյուսակը ներկայացնում է Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ընդհանուր գումարները հաշվեկշռային արժեքներով, դասակարգված ըստ տոկոսների, վերանայման կամ մարման ամսաթվի պայմանագրային ժամկետների:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2019 թ. դեկտեմբերի 31						
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից- 1 տարի	1-5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ							
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3.16%	200,885	99,797				300,682
Ժամկետային ավանդներ	7.80%	1,240,565	930,366	1,028,214			3,199,145
Հաճախորդներին տրված վարկեր	29.92%	1,597,995	2,254,989	8,225,128	7,391,915	23,987	19,494,014
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	7.77%	-	-	126,126	484,245	-	610,371
Ընդամենը ֆիքսված տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		3,039,445	3,285,152	9,379,468	7,876,160	23,987	23,604,212
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		180,743	-	-	-	-	180,743
Այլ ակտիվներ		9,965	-	-	-	-	9,965
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		190,708	-	-	-	-	190,708
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		3,230,153	3,285,152	9,379,468	7,876,160	23,987	23,794,920
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ							
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>							
Փոխառու միջոցներ	10.25%	101,018	-	95,175	1,908,728	-	2,104,921
Վարձակալության պարտավորություններ	11.83%	7,588	15,816	70,882	255,041	71,084	420,411
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույթով ֆինանսական պարտավորություններ		108,606	15,816	166,057	2,163,769	71,084	2,525,332
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ</i>							
Այլ ֆինանսական պարտավորություններ		13,437		4,400	-	-	17,837
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ		13,437		4,400	-	-	17,837
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ		122,043	15,816	170,457	2,163,769	71,084	2,543,169
Տոկոսադրույթի զգայունության տարբերություն		2,930,839	3,269,336	9,213,411	5,712,391	(47,097)	
Տոկոսադրույթի զգայունության կուտակային տարբերություն		2,930,839	6,200,175	15,413,586	21,125,977	21,078,880	21,078,882
Իրացվելիության տարբերություն		3,108,110	3,269,336	9,209,011	5,712,391	(47,097)	
Իրացվելիության կուտակային տարբերություն		3,108,110	6,377,446	15,586,457	21,298,848	21,251,751	21,251,751

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2018 թ. դեկտեմբերի 31						Ընդամենը
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույթ	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից- 1 տարի	1-5 տարի	5 տարուց ավել	
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ							
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.67%	22,370	250,087	-	-	-	272,457
Ժամկետային ավանդներ	7.10%	661,318	1,265,738	1,303,213	-	-	3,230,269
Հաճախորդներին տրված վարկեր	28.40%	1,161,417	2,147,022	8,123,118	6,056,958	15,505	17,504,020
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	7.17%	239,471	-	674,115	484,007	-	1,397,593
Ընդամենը ֆիքսված տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		2,085,576	3,662,847	10,100,446	6,540,965	15,505	22,404,339
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		62,961	-	-	-	-	62,961
Այլ ակտիվներ		8,603	-	-	-	-	8,603
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		71,564	-	-	-	-	71,564
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		2,156,140	3,662,847	10,100,446	6,540,965	15,505	22,475,903
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ							
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>							
Փոխառու միջոցներ	15.53%	150,433	-	2,000,633	-	-	2,151,066
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույթով ֆինանսական պարտավորություններ		150,433	-	2,000,633	-	-	2,151,066
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ</i>							
Այլ ֆինանսական պարտավորություններ		17,374	6,080	-	-	-	23,454
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ		17,374	6,080	-	-	-	23,454
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ և հանձնառություններ		167,807	6,080	2,000,633	-	-	2,174,520
Տոկոսադրույթի զգայունության տարբերություն		1,934,143	3,662,847	8,099,813	6,540,965	15,505	
Տոկոսադրույթի զգայունության կուտակային տարբերություն		1,934,143	5,596,990	13,696,803	20,237,768	20,253,273	20,253,273
Իրացվելիության տարբերություն		1,988,333	3,656,767	8,099,813	6,540,965	15,505	
Իրացվելիության կուտակային տարբերություն		1,988,333	5,645,100	13,744,914	20,285,879	20,301,384	20,301,384

«ԱՐԵՉԱԿ» ՈՆԻՎԵՐՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Աշխարհագրական ռիսկի կենտրոնացում. բոլոր ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները գտնվում են ՀՀ տարածքում՝ 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Վերանայված վարկեր. Վարկերը, ընդհանուր առմամբ, վերանայվում են վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Ընկերությունն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույթներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ձևավորման, որն, ըստ էության, կդիտվի որպես նոր վարկ: 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 693 հազար դրամ և 19,172 հազար դրամ համապատասխանաբար:

Իրացվելության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, երբ կազմակերպությունը դժվարություններ է ունենում ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս:

Ընկերությունը ձգտում է պահպանել ֆինանսավորման աղբյուրների կայուն կառուցվածք, որը հիմնականում բաղկացած է այլ ֆինանսական հաստատություններին վճարվելիք գումարներից: Ընկերությունը միջոցները պահում է ավանդների տեսքով, որպեսզի կարողանա արագ և հեշտ արձագանքել իրացվելիության անկանխատեսելի պահանջներին:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների մակարդակը՝ անհրաժեշտ պարտավորությունները մարելու համար, ապահովել մի շարք ֆինանսավորման աղբյուրների հասանելիությունը, ունենալ ֆինանսավորման պայմանական պլաններ և մոնիտորինգ իրականացնել իրացվելիության գործակիցների նկատմամբ՝ օրենսդրության պահանջներին համապատասխան: Այս գործակիցներն են՝

- Զօգտագործվող կանխիկի հարաբերակցություն, որը հաշվարկվում է դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանելով վարկային պորտֆելի մնացորդի վրա: 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործակիցը կազմում էր 2.47% (2018 թ. դեկտեմբերի 31-ին՝ 1.92%):
- Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցություն, որը հաշվարկվում է դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանելով ընդհանուր ակտիվների վրա: 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործակիցը կազմում էր 1.45% (2018 թ. դեկտեմբերի 31-ին՝ 1.45%):
- Ընթացիկ հարաբերակցություն, որը հաշվարկվում է որպես ընթացիկ ակտիվների և պարտավորությունների հարաբերակցություն: 2019 թ. դեկտեմբերի 31-ին գործակիցը կազմում էր 18.52 (2018թ. դեկտեմբերի 31-ին՝ 5.71):
- Արագ հարաբերակցություն, որը հաշվարկվում է դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանելով ընթացիկ պարտավորությունների վրա: 2019 թ. դեկտեմբերի 31-ին գործակիցը կազմում էր 0.56 (2018 թ. դեկտեմբերի 31-ին՝ 0.12):

Ընկերությունն իրականացնում է իրացվելիության կառավարում՝ նպատակ ունենալով մշտապես ապահովել պարտավորությունների մարման ժամկետներին համապատասխան անհրաժեշտ միջոցների առկայությունը: Իրացվելիության քաղաքականությունը ուսումնասիրվում և հաստատվում է ռիսկերի կառավարման հանձնաժողովի միջոցով՝ Տնօրենների խորհրդի կողմից :

Ընկերությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածք, որը ներառում է բանկերից և այլ վարկային կազմակերպություններից ստացված երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներին արագ և հեշտ արձագանքելու համար:

Իրացվելիության կառավարման քաղաքականությունը պահանջում է՝

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

- Դրամական միջոցների հոսքերի կանխատեսում ըստ արտարժույթի և այդ հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում
- Ֆինանսավորման աղբյուրների տարբերակված կառուցվածքի պահպանում
- Պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում
- Պարտքերի ֆինանսավորման ծրագրերի վարում
- Բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել՝ որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում
- Իրացվելիության և ֆինանսավորման հետ կապված՝ անկանխատեսելի հանգամանքներում գործողությունների ծրագրերի ապահովում
- Սահմանված ցուցանիշներին համապատասխան՝ իրացվելիության գործակիցների մոնիտորինգ:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս ֆինանսական պարտավորությունները 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ պայմանագրային մնացորդային ժամկետայնությամբ: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Նման չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են այն գումարից, որը ներառված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ գումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Երբ վճարելիք գումարը ֆիքսված չէ, բացահայտված գումարը որոշվում է՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները: Արտարժույթային վճարումները փոխարկվում են՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա ընթացիկ փոխարժեքը:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում նշանակալի տարբերություն ֆինանսական գործիքների ակնկալվող և պայմանագրային ժամկետայնության միջև:

«ԱՐԵԳԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2019 թ. դեկտեմբերի 31							Հաշվեկշռային արժեք
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից- 1 տարի	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը	
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>								
Փոխառու միջոցներ	10.25%	101,397		100,294	2,413,680		2,615,371	2,104,921
Վարձակալության պարտավորություններ	11.83%	7,663	16,212	76,659	355,170	152,014	607,718	420,411
Ընդամենը ֆիքսված տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		109,060	16,212	176,953	2,768,850	152,014	3,223,089	2,525,332
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ</i>								
Այլ ֆինանսական պարտավորություններ		13,437	-	4,400			17,837	17,837
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		13,437	-	4,400			17,837	17,837
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ		122,497	16,212	181,353	2,768,850	152,014	3,240,926	2,543,169

	2018 թ. դեկտեմբերի 31							Հաշվեկշռային արժեք
	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից- 1 տարի	1-5 տարի	Ընդամենը		
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>								
Փոխառու միջոցներ	15.53%	151,268	-	2,161,015	-		2,312,283	2,151,066
Ընդամենը ֆիքսված տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		151,268	-	2,161,015	-		2,312,283	2,151,066
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ</i>								
Այլ ֆինանսական պարտավորություններ		17,374	6,080	-	-		23,454	23,454
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		17,374	6,080	-	-		23,454	23,454
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ		168,642	6,080	2,161,015	-		2,335,737	2,174,520

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

22. ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կապիտալը կառավարելիս Ընկերության նպատակները հետևյալն են. (ա) ապահովել ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված՝ կապիտալի նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխանությունը, (բ) պահպանել Ընկերության կարողությունը՝ շարունակելու իր գործունեությունն անընդհատության սկզբունքով, ապահովելով շահույթ բաժնետերերին և օգուտ այլ գործընկերներին և պահպանել կապիտալի օպտիմալ կառուցվածք՝ կապիտալի արժեքը նվազեցնելու համար: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու համար Ընկերությունը կարող է կարգավորել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ նվազեցնելով պարտքը: 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից կառավարվող կապիտալի գումարը կազմել է 21,762,946 հազար դրամ (2018 թ. դեկտեմբերի 31՝ 20,243,027 հազար դրամ):

ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի նկատմամբ ներկայացվող ներկա պահանջների համաձայն, վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն նվազագույն բաժնետիրական կապիտալ և ընդհանուր կապիտալ 150,000 հազար դրամի չափով: 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների դրությամբ Ընկերության կապիտալի չափը համապատասխանում է սահմանված չափին:

23. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ, սովորական գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են պահանջներ ներկայացվել: Հիմք ընդունելով սեփական գնահատումները և ներքին մասնագիտական խորհրդատվությունը, դեկավարությունն այն կարծիքին է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի առաջանա, հետևաբար ֆինանսական հաշվետվություններում ոչ մի պահուստ չի նախատեսվել:

Հարկային օրենսդրություն. ՀՀ հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնութագրվում է օրենսդրության հաճախակի փոփոխություններով, պաշտոնական հայտարարություններով և դատական որոշումներով, որոնք երբեմն ոչ հստակ և հակասական են՝ ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են վերանայման և քննության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են տույժեր և տուգանքներ սահմանել: Հարկային տարին շարունակում է բաց լինել հարկային մարմինների վերանայման համար՝ հաջորդ երեք օրացուցային տարիների ընթացքում:

Այս հանգամանքները կարող են հարկային ռիսկեր առաջացնել ՀՀ-ում, որոնք առավել նշանակալի են, քան այլ երկրներում: Դեկավարությունը կարծում է, որ համարժեքորեն է նախատեսել հարկային պարտավորությունները, հիմնվելով ՀՀ գործող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այդուհանդերձ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել և ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է նշանակալի լինել, եթե այդ մարմիններին հաջողվի կիրառել իրենց մեկնաբանությունները:

Ապահովագրություն. ՀՀ-ում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և այլ երկրներում լայնորեն տարածված ապահովագրության շատ տեսակներ դեռևս Հայաստանում չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր հիմնական միջոցների համար, ինչպես նաև ամբողջովին ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրի՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած, կամ վերջինիս գործունեության հետ կապված պատահարներից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Կապիտալ ծախսերի գծով պարտավորություններ. 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը հիմնական միջոցների մասով չունի պայմանագրային կապիտալ ծախսերի պարտավորություններ:

ՀՀ ԿԲ կանոնակարգերի պահանջների կատարում. Ընկերությունը ենթակա է ՀՀ ԿԲ-ի կողմից կանոնակարգման, որը հիմնականում վերաբերում է իր գործունեությանը: Նման կանոնակարգման պահանջների չկատարումը կարող է բացասական հետևանքներ ունենալ

«ԱՐԵՊԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (հազար ՀՀ դրամով)

Ընկերության համար, ներառյալ ՀՀ ԿԲ-ի կողմից տուգանքների սահմանումը: Ընկերությունը կատարել է նշված կանոնակարգման պահանջները 2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Գործարար միջավայրը. զարգացող երկրների շուկաները, ինչպիսին է Հայաստանի շուկան, ավելի շատ են ենթակա ռիսկերի, քան առավել զարգացած երկրների շուկաները, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Հայաստանում բիզնեսների գործունեության վրա անդրադարձող օրենքներն ու կանոնակարգերը շարունակում են փոխվել, իսկ հարկային և կարգավորիչ դաշտը տարբեր կերպ են մեկնաբանվում: Իրավական, կարգավորիչ և քաղաքական միջավայրը ՀՀ կառավարության կողմից ընդունված ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների հետ միասին մեծապես ազդում է Հայաստանի ապագա տնտեսական ուղղության վրա: Հայաստանը դեռևս գտնվում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների գործընթացում: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի զարգացած ազատ շուկայական տնտեսություններին: Ի լրումն, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեության ծավալները, ինչը թերևս չի արտացոլում ֆինանսական գործիքների արժեքները: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում համակարգային ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների վիճակի վատթարացումը բացասական ազդեցություն ունեն Ընկերության կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Ավելին, դեռևս առկա են անորոշություններ՝ կապված երկրների տնտեսական իրավիճակի հետ, որը կարող է հանգեցնել արտասահմանից ներհոսող դրամական միջոցների պակասորդի, ինչպես նաև հանքարդյունաբերական արտադրանքի գների անկման, որը մեծապես որոշիչ դեր է խաղում ՀՀ տնտեսության համար: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Ընկերության գործունեությունը կարող են վատթարանալ: Այնուամենայնիվ, քանի որ նման ենթադրությունների հիմքում ընկած են բազմաթիվ փոփոխական պայմաններ և անորոշություններ, ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Բացի այդ 2020թ. սկզբին նոր կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) սկսեց արագ տարածվել ամբողջ աշխարհով՝ հանգեցնելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2020թ. մարտ ամսին համաճարակային կարգավիճակի մասին հայտարարմանը: Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու համար շատ երկրների կողմից ձեռնարկված պատասխան միջոցները հանգեցնում են մի շարք ընկերությունների համար զգալի գործառնական գործունեությունների խափանումների և եական ազդեցություն են ունենում համաշխարհային ֆինանսական շուկաների վրա: Զանի որ իրավիճակն արագ զարգանում է, այն կարող է զգալի ազդեցություն ունենալ մի շարք ոլորտների շատ ընկերությունների ձեռնարկությունների վրա՝ ներառյալ, բայց չսահմանափակելով ձեռնարկությունների գործունեությունների խափանմանը՝ որպես արտադրության խափանման կամ ձեռնարկությունների փակման, մատակարարման շղթայի ընդհատման, անձնակազմի կարանտինի մեջ գտնվելու, նվազած պահանջարկի և ֆինանսավորման գծով առաջացած դժվարությունների արդյունք: Ավելին, Ընկերությունը կարող է կրել նոր կորոնավիրուսային հիվանդության անհամեմատ զգալի ազդեցությունը համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա վերջինիս ունեցած բացասական ազդեցության հետևանքով: Ընկերության վրա նոր կորոնավիրուսային հիվանդության ազդեցության չափը մեծապես պայմանավորված է աշխարհի և Հայաստանի տնտեսության վրա համաճարակի ազդեցությունների մակարդակով և տևողությամբ:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե վերը նշված գործոնների ազդեցությունը դիտարկելի և արժանահավատորեն չափելի դառնար ՀՀ համար:

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Ֆինանսական պարտավորություններ

Ամորտիզացված արժեքով

*պահվող ֆինանսական
պարտավորություններ`*

- վարկեր փոխկապակցված

կողմերից

2,074,196

2,074,196

- վարձակալության

պարտավորություններ

430,612

430,612

Ընդամենը

-

2,504,808

2,504,808

Իրական արժեքի հիերարխիա առ 2018 թ. դեկտեմբերի 31

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
--	-------------------	-------------------	-------------------	-----------------

Ֆինանսական ակտիվներ

*Վարկեր և դեբիտորական
պարտքեր`*

- հաճախորդներին տրված

վարկեր

-

-

17,472,678

17,472,678

Ներդրումային արժեթղթեր

- պետական

պարտատուներ

-

1,436,157

-

1,436,157

Ընդամենը

1,436,157

17,472,678

18,908,835

Ֆինանսական պարտավորություններ

*Ամորտիզացված արժեքով
պահվող ֆինանսական
պարտավորություններ`*

- վարկեր

փոխկապակցված

կողմերից

-

-

2,186,336

2,186,336

Ընդամենը

-

2,186,336

2,186,336

Վերը նշված մակարդակ 2-ում և 3-ում ներառված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների` իրական արժեքները որոշվել են զեղչված դրամական հոսքերի մոդելի ընդհանուր ընդունված գնային մոդելի համաձայն, որում ամենակարևոր հանգամանքը գործընկերների վարկային ռիսկի զեղչման տոկոսադրույթն է:

25. ՓՈՒԿԱԴԱՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՅԵՏ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Կողմերը, որպես կանոն, համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ, կամ կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին, կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ` ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, և ոչ միայն իրավական կառուցվածքի վրա:

2019 և 2018 թթ. դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են`

«ԱՐԵՉԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

	2019 թ. դեկտեմբերի 31		2018 թ. դեկտեմբերի 31	
	Փոխկապակցված կողմերի մնացորդներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների	Փոխկապակցված կողմերի մնացորդներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների
Հաճախորդներին տրված վարկեր՝ - Առանցքային ղեկավար անձնակազմին տրված վարկերի համախառն գումար (պայմանագրային տոկոսադրույք՝ 5%, ժամկետայնություն՝ 2026)	77,430	20,528,965	84,736	18,058,478
Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումից կորուստների գծով պահուստ	(1,462)	(1,034,951)	(855)	(554,458)
Վարկեր և փոխառություններ՝ - բաժնետեր	2,104,921	2,104,921	2,151,066	2,151,066
Շահաբաժնի պարտավորություն - բաժնետեր	386,450	386,450	339,347	339,347

Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է գործադիր վարչությունը, վարչությունների ղեկավարները և վերստուգողը:

Տնօրենների խորհրդի անդամների ընդհանուր վարձատրության մասով ծախսերը, ներառված վարչական և այլ գործառնական ծախսերում, իսկ առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրության ծախսերը՝ անձնակազմի գծով ծախսերում, հետևյալն են՝

	2019թ.		2018թ.	
	Փոխկապակցված կողմերի հաշվետվություն- գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական ների	Փոխկապակցված կողմերի հաշվետվություն- գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական ների
Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրություն՝		(1,124,480)		(1,165,270)
- կարճաժամկետ աշխատողների հատուցումներ	(139,192)		(132,772)	
- այլ երկարաժամկետ հատուցումներ	(9,072)		(9,505)	
Ընդամենը	(148,264)	(1,124,480)	(142,277)	(1,165,270)

«ԱՐԵՊԱԿ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(հազար ՀՀ դրամով)**

Փոխկապակցված կողմերի հետ եկամտային և ծախսային հոդվածները հետևյալն են՝

	2019 թ.		2018 թ.	
	Փոխկապակցված կողմերի գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների	Փոխկապակցված կողմերի գործարքներ	Ընդամենը՝ ըստ ֆինանսական հաշվետվությունների
Տոկոսային եկամուտ - առանցքային դեկավար անձնակազմ	15,223	5,283,227	16,407	5,296,687
Տոկոսային ծախս - բաժնետեր	(254,738)	(306,279)	(301,173)	(301,173)
Գործառնական ծախսեր - խորհրդին առնչվող ծախսեր	(64,892)	(681,787)	(25,241)	(672,632)

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները կատարվել են «անկախ կողմերի միջև գործարքի» սկզբունքով, բացառությամբ անձնակազմին տրվող վարկերի:

26. ՀԵՏԱԳԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020թ. մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը հայտարարեց Նոր կորոնավիրուսով պայմանավորված շնչառական հիվանդության բռնկումը որպես համաճարակ: Նախապես հայտնաբերված 2019թ. վերջին և հիմա հայտնի որպես COVID-19՝ հիվանդության բռնկումը ազդեցություն է ունեցել աշխարհում հազարավոր անհատների վրա: Սրան ի պատասխան՝ շատ երկրներ իրականացրել են միջոցառումներ հիվանդության դեմ պայքարելու համար, որը ազդեցություն է թողել համաշխարհային բիզնես գործառնությունների վրա:

Չնայած 2019թ. դեկտեմբերի 31-ից հետո Ընկերությունը չի կրել աշխարհի և Հայաստանի առողջական, ֆինանսական և տնտեսական իրավիճակի նշանակալի բացասական ազդեցություններ, դեկավարությունը դիմել է որոշակի կանխարգելիչ միջոցների՝ այդ թվում նաև վերահսկել է ընթացիկ իրացվելիության վիճակը կանոնավոր հիմունքով, սահմանել է վարկային արձակուրդ, վարկերի տրամադրման ավելի խիստ գործելակերպ և կազմել է գործողությունների պլան՝ ի պատասխան ցանկացած իրավիճակի, որը հետագայում կարող է ունենալ բացասական ազդեցություն: